

« 05 » մարտ 2018 թ No 564 - Ա

ՊԻԼՈՐՈՒՍԻ ՀԵԼԻԿՈՐԲԱԿՏԵՐ /HELICOBACTER PYLORI/ ՎԱՐԱԿԻ
ՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.3 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման 12-րդ կետի «դ» ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Պիլորուսի հելիկոբակտեր /Helicobacter pylori/ վարակի վարման ուղեցույցը»-ը՝ համաձայն Հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի խորհրդական Արմեն Փարսադանյանին՝ սույն հրամանը հաստատումից հետո սեղմ ժամկետում ապահովել ուղեցույցի մուտքագրումը միասնական էլեկտրոնային առողջապահության համակարգ:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

Ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝ սույն հրամանով հաստատված ուղեցույցը ընդունել ի գիտություն:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ս.Խաչատրյանին:

Լ.ԱԼԹՈՒՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է
ՀՀ առողջապահության նախարարի
2018թ. մարտի 05 - ի թիվ 564 – Ա հրամանով

ՊԻԼՈՐՈՒՍԻ ՀԵԼԻԿՈՐԱԿՏԵՐ /HELICOBACTER PYLORI/ ՎԱՐԱԿԻ ՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփ տեսություն

Ուղեցույցը տրամադրում է *Helicobacter Pylori* վարակի արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված ախտորոշիչ, բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել *Helicobacter Pylori* վարակով մեծահասակ պացիենտների բուժման արդյունքները:

Մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է Գաստրոէնտերոլոգների հայկական ասոցիացիայի անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել Gut ամսագրում 2016թ. հրապարակված «*Helicobacter Pylori* վարակի վարումը. Մասատրիխտ V/Ֆլորենցիայի կոնսենսուսային զեկույց»-ի (Management of *Helicobacter pylori* infection—the Maastricht V/Florence Consensus Report) նյութերը: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների արդյունավետությունը որոշելիս հիմք են ընդունվել Մասատրիխտ IV կոնսենսուսային զեկույցի համար մշակված համակարգը կամ PICO հարցերի արդյունքում շնորհված աստիճանները:

Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Գաստրոէնտերոլոգների հայկական ասոցիացիայի կողմից (արձանագրությունը կցվում է):

Ուղեցույցը նախատեսված է թերապևտների, գաստրոէնտերոլոգների, ընտանեկան բժիշկների, վարակաբանների, մանրէաբանների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա՝ Ուղեցույցում լուսաբանվել են *H. Pylori* վարակի սահմանումները, համաճարակաբանության, այլ վիճակների հետ նույնականացումների, ախտորոշման, բուժական միջամտությունների և հանրային առողջապահության հիմնահարցերը: Առաջարկվել են ներդրման տրաբերակները և աուդիտի ցուցանիշները:

Եզրակացություն

Միջազգային փորձագետների մեծաքանակ խումբ եկել է համաձայնության *H. Pylori* ինֆեկցիայի վարման բազմաթիվ կարևոր սկզբունքների վերաբերյալ: Չնայած այն փաստին, որ շատ խորհուրդներ ունեն թույլ ապացուցողական ուժ, այնուամենայնիվ, այս մեթոդաբանությամբ մշակված տեղեկատվությունը՝ բարձր տարածվածությամբ և հնարավոր բարձր մահացության ռիսկով պացիենտների բուժման արդյունքների բարելավման հիմքն է:

Հիմնական բառեր

Ապացուցողական բժշկություն, ուղեցույցներ, ինֆեկցիա, վարակ, H. Pylori, հելիկոբակտեր, գաստրիտ, էռադիկացիա, ստամոքսի միկրոբիոտա, հանրային առողջապահություն, ախտորոշում, բուժում, ստամոքսի քաղցկեղի կանխարգելում, ստամոքսի ապրոֆիա, աղիքային մետապլազիա:

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողի և աշխատանքային խմբի անդամների հայտարարագրերը կցվում են: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները չեն ֆինանսավորվել որևէ կառույցի կամ անհատի կողմից:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում: Խորհուրդների մեծամասնությունը կիրառելի է ինչպես առաջնային բուժօգնության օղակ դիմած անձանց, այնպես էլ ոչ ԻԹԲ-ում հոսպիտալացված հիվանդների համար:

Բովանդակություն

1. Նախաբան
2. Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն
3. Սահմանում
4. Համաճարակաբանություն
5. Ցուցումներ/նույնականացումներ
6. Ախտորոշում
7. Բուժում
8. Կանխարգելում/ Հանրային առողջապահություն
9. H. Pylori և ստամոքսի միկրոբիոտա
10. Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ
11. Գրականության ցանկ
12. Աղյուսակ. Ապացույցների որակի դասակարգում

Հապավումներ

H. Pylori – Helicobacter Pylori

PICO - պոպուլյացիա՝ population, միջամտություն՝ intervention, համեմատվող՝ comparator, ելք՝ outcome

MALT - լորձաթաղանթի հետ նույնականացված լիմֆոիդ հյուսվածք

12-մ.ա. – տասներկուամսեայն աղի

ՀՄԴ – Հիվանդությունների միջազգային դասակարգում

ՈՍՀԲՊ – ոչ ստերոիդային հակաբորբոքիչ պատրաստուկներ

ԱՍԹ – ացետիլսալիցիլաթթու

ՊՊԻ – պրոտոնային պոմպի ինհիբիտորներ

ԳԷՌՀ – գաստրոէզոֆագեալ ռեֆլյուքս հիվանդություն

CagA – ցիտոկինի հետ նույնականացված գենի արգասիք

ԵԱԱ – երկաթ անբավարարության անեմիա

ԻԹՊ – իդիոպաթիկ թրոմբոցիտոպենիկ պուրպուրա

ԿՀԹ – կղանքային հակագենային թեստ

ՇՈւԹ – շնչառական ուրեազային թեստ

ԱՈւԹ – արագ ուրեազային թեստ

ԷԳԴՍ – էզոֆագոգաստրոդուոդենոսկոպիա

ELISA – ֆերմենտների հետ կապված իմունոսորբենտային հետազոտություն

ԻՀՔ – իմունահյուսվածաքիմիական

ՀՄՁԹ – հակամանրէային զգայունության թեստ

ՊՇՌ – պոլիմերազային շղթայական ռեակցիա

ՊԳ – պեպսինոգեն

ԲՔԹ – բիսմութային քառակի թերապիա

ՍՊՔ – ստամոքսի պրոքսիմալ քաղցկեղ

ՈԿՍՔ – ոչ կարդիալ ստամոքսի քաղցկեղ

ՊԲԿՓ – պատահական բաշխմամբ կլինիկական փորձարկում

ԸՍԲԼ – ընդարձակ սպեկտրով բետա լակտամազներ

Նախաբան

H. Pylori-ն մարդկային պաթոգեն է, որը փոխանցվում է մարդուց մարդուն և առաջացնում է քրոնիկական ակտիվ գաստրիտ բոլոր վարակված մարդկանց մոտ: Սա կարող է հանգեցնել պեպտիկ խոցի, ատրոֆիկ գաստրիտի, ստամոքսի ադենոկարցինոմայի և MALT (լորձաթաղանթի հետ նույնականացված լիմֆոիդ հյուսվածքի) լիմֆոմայի առաջացման: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը սահմանել է H. Pylori –ն որպես առաջին կարգի քաղցկեղածին [1]: Ամբողջ աշխարհի բնակչության մոտ կեսը վարակված է այս մանրէով, ընդ որում, Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում վարակի տարածվածության ցուցանիշը մոտ 30% է, իսկ Հարավային, Արևելյան Եվրոպայի, Ասիայի երկրներում՝ 50%-ից ավելի [2]: Վարակի հաջողակ բուժման հիմնական խոչընդոտներից է համարվում մանրէի տարեցտարի ավելացող կայունությունը՝ հակամանրէային դեղորայքի նկատմամբ:

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է Գաստրոէնտերոլոգների հայկական ասոցիացիայի անդամների կողմից: Գրականության աղբյուրներն ընտրվել են հիմնական բառերի օգնությամբ իրականացված համակարգային որոնման հիման վրա: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ուղեցույցների ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն և ցանկացած խորհրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Տեղայնացման/ադապտացիայի սկզբնաղբյուրներ է հանդիսացել Gut ամսագրում Եվրոպական Հելիկոբակտերի և միկրոբիոտայի ուսումնասիրման խմբի և կոնսենսուսային պանելի (European Helicobacter and Microbiota Study Group and Consensus panel) կողմից 2016թ. հրապարակված «Helicobacter Pylori վարակի

վարումը. Մասստրիխտ V/Ֆլորենցիայի կոնսենսուսային զեկույցը» (Management of Helicobacter pylori infection—the Maastricht V/Florence Consensus Report):

Ապացուցողական մակարդակը և երաշխավորության արդյունավետությունը վերջնականապես որոշվել են միայն աշխատանքային խմբի անհատական հանդիպումներից հետո: Կախված հետազոտությունների տիպից՝ ապացուցողական մակարդակը և խորհուրդների մակարդակը հիմնվել են կամ նախկին կոնսենսուսային զեկույցներում ընդունված համակարգի վրա [3] (տես՝ Աղյուսակ 1), կամ էլ, եթե խորհուրդները եղել են աստիճանը գնահատելու ենթակա, ապա հիմնվելով այսպես կոչված PICO հարցերի վրա (PICO: պոպուլյացիա՝ population, միջամտություն՝ intervention, համեմատվող՝ comparator, ելք՝ outcome), դրանց շնորհիվ է համապատասխան աստիճան [6]:

Տեղայնացման/ադատպացիայի աշխատանքները իրականացվել են ըստ ADAPTE մեթոդաբանության՝ միջմասնագիտական աշխատանքային խմբի անդամների առերես հանդիպումների և հեռահար շփումների միջոցով: Ուղեցույցի դրույթների վերաբերյալ ապահովվել է աշխատանքային խմբի բոլոր անդամների կոնսենսուս: Սույն Ուղեցույցը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Սահմանում

H. Pylori-ն մարդկային պաթոգեն է՝ գրամ-բացասական մանրէ, որը փոխանցվում է մարդուց մարդուն: Այն գաղութացնում է ստամոքսի անտրալ շրջանի լորձաթաղանթի բջիջները և առաջացնում է քրոնիկական ակտիվ գաստրիտ բոլոր վարակված մարդկանց մոտ: Սա կարող է հանգեցնել պեպտիկ խոցի, ատրոֆիկ գաստրիտի, ստամոքսի ադենոքաղցկեղի և MALT (լորձաթաղանթի հետ նույնականացված լիմֆոիդ հյուսվածքի) լիմֆոմայի առաջացման: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 1994թ. սահմանել է H. Pylori –ն որպես առաջին կարգի քաղցկեղածին:

Համաճարակաբանություն

Ամբողջ աշխարհի բնակչության մոտ կեսը վարակված է այս մանրէով, ընդ որում, Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում վարակի տարածվածության ցուցանիշը մոտ 30% է, իսկ Հարավային, Արևելյան Եվրոպայի, Ասիայի երկրներում՝ 50%-ից ավելի [2]: Ցավոք, Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վարակի տարածվածության մասին որևէ համաճարակաբանական տվյալներ չկան: Վարակի հաջողակ բուժման հիմնական խոչընդոտներից է համարվում մանրէի տարեցտարի ավելացող կայունությունը՝ հակամանրէային դեղորայքի նկատմամբ: Հայաստանի Հանրապետությունում տարբեր հակաբիոտիկների նկատմամբ *H. Pylori* –ի կայունության տարածվածության մասին համաճարակաբանական տվյալներ չեն հրապարակվել:

Ցուցումներ / համակցումներ

Խորհուրդ 1

***H. Pylori* գաստրիտը, անկախ ախտանշաններից և բարդություններից, հանդիսանում է վարակիչ հիվանդություն:**

Ապացուցողական աստիճան՝ 1B. Խորհրդի մակարդակը՝ A (ուժեղ)

H. Pylori-ն մարդկային ախտածին է, որը փոխանցվում է մարդուց մարդուն և առաջացնում է քրոնիկական ակտիվ գաստրիտ բոլոր վարակված մարդկանց մոտ: Սա կարող է հանգեցնել պեպտիկ խոցի, ատրոֆիկ գաստրիտի, ստամոքսի ադենոկարցինոմայի և MALT (լորձաթաղանթի հետ նույնականացված լիմֆոիդ հյուսվածքի) լիմֆոմայի առաջացման: *H. Pylori* –ի էռադիկացիան բուժում է գաստրիտը և կարող է կանխարգելել հիվանդության վերսկսումը կամ երկարատև ընթացքի բարդությունները: Հետևաբար՝ *H. Pylori*-ն համարվում է ինֆեկցիոն հիվանդություն, անկախ հիվանդների ախտանշաններից կամ հիվանդության աստիճանից [4]:

Խորհուրդ 2

Ստուգել և բուժել ռազմավարությունն ընդունելի է չհետազոտված դիսպեպսիայի համար: Այս մոտեցումը կախված է տվյալ տարածաշրջանում H. Pylori տարածվածությունից և արժեք-արդյունք հարաբերության նկատառումներից: Այս մոտեցումն ընդունելի չէ մեծահասակ կամ սպառնալի ախտանշաններով հիվանդների համար:

Ապացուցողական աստիճան՝ բարձր. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

Չհետազոտված դիսպեպսիայով երիտասարդ պացիենտներին ոչ ինվազիվ թեստերով ստուգել և բուժել ռազմավարությունն առավել նախընտրելի է, քան պրոտոնային պոմպի ինհիբիտորների կիրառումը կամ գաստրոսկոպիան՝ ելնելով բուժման արժեքից և հիվանդի համար անհարմարությունից [7,8]: Ուղեցույցների «ստուգել և բուժել» ռազմավարությունը «էնդոսկոպիա անել և բուժել»-ուց նախընտրելը հիմնված է 5 պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկումների (ՊԲՎՓ) արդյունքների վրա [9-12]: Ըստ դրանց, էնդոսկոպիա կատարել և բուժել ռազմավարությունն ունի փոքր, բայց հավաստի առավելություն՝ հիվանդի բավարարվածության և ախտանշանների բարելավման տեսանկյունից: Այս հինգ հետազոտություններն ընդգրկվել են մեկ մեթավերլուծությունում [8] և չորսը՝ Կոխրեյնյան զեկույցում [13]:

Որոշ ուղեցույցներ, ելնելով տնտեսական շահավետությունից, H. Pylori 20%-ից պակաս տարածվածությամբ պոպուլյացիաներում առաջարկում են բուժումը սկսել պրոտոնային պոմպի ինհիբիտորներով, սակայն այդ մոտեցումը ընդունելի է ոչ բոլոր երկրների համար: H. Pylori –ի սքրինինգն ընդունելի չի վերջինիս 10% տարածվածության պոպուլյացիաներում, քանի որ այն կարող է հանգեցնել կեղծ դրական արդյունքի և ոչ նպատակահարմար բուժման [14]: Այս իրավիճակն ավելի հավանական է ցածր զգայունությամբ և առանձնահատկությամբ շճաբանական թեստերի, քան շնչառական ուրեազային թեստի դեպքում (ՇՈւԹ):

Գոյություն ունի սերտ համապատասխանություն H. Pylori –ի տարածվածության և դրանով պայմանավորված հիվանդությունների՝ ներառյալ պեպտիկ խոցի ու ստամոքսի քաղցկեղի, հիվանդացության ցուցանիշների միջև: Դա նշանակում է, որ H. Pylori –ի ցածր տարածվածությամբ պոպուլյացիաներում վերջինիս դրական թեստի, ինչպես նաև դրանով պայմանավորված հիվանդությունների առկայության հավանականությունը ցածր է: H. Pylori –ի ցածր տարածվածության դեպքում բարձրանում է կեղծ դրական շճաբանական թեստի հավանականությունը: Այդպիսի պոպուլյացիաներում ոչ H. Pylori –ով պայմանավորված հիվանդությունների հանդիպման հավանականությունը գերազանցում է հակառակին: Ցածր H. Pylori –ի տարածվածության շրջաններում էնդոսկոպիան կարող է ընդունելի լինել՝ կերակրափողային պաթոլոգիան հայտնաբերելու համար:

Եթե առկա են սպառնացող ախտանշաններ՝ քաշի կորուստ, դիսֆագիա, ստամոքս աղիքային արյունահոսություն, որովայնային գոյացություն կամ երկաթ անբավարարության սակավարյունություն, էնդոսկոպիան անհրաժեշտ է [15]: Երբ ստամոքսի քաղցկեղի ռիսկը բարձր է, ստուգիր և բուժիր ռազմավարությունը խորհուրդ չի տրվում կիրառել հատկապես մեծահասակ հիվանդներին բուժելիս, ում մոտ ոչ ինվազիվ թեստերի ճշտությունը ցածր է և ԷԳԴՍ-ն նախընտրելի է [16]: Տարիքային շեմը տարբեր է ըստ տարածաշրջանների՝ պայմանավորված ստամոքսի քաղցկեղով անձանց տարիքով:

Խորհուրդ 3

Էնդոսկոպիայով հիմնավորված ռազմավարությունը պետք է դիտարկվի դիսպեպտիկ ախտանշաններով պացիենտների մոտ՝ հատկապես H. Pylori-ի ցածր տարածվածությամբ պոպուլյացիաներում:

Ապացուցողական աստիճան՝ շար ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Էնդոսկոպիան պետք է ներառի ստամոքսաղիքային ուղու ողջ վերին հատվածի տեսանելիությունը, այն է՝ կերակրափողը, ստամոքսի մուտքը,

հետծավման ժամանակ հատակը, մարմինը, խորշը, կոճղեզը, վայրէջ 12-մ.ա.՝ ցանկացած պաթոլոգիա հայտնաբերելու և բիոպսիա կատարելու նպատակով: Բիոպսիաները պետք է վերցնել՝ ըստ ստանդարտացված գործելակարգերի: Եթե կատարվում է էնդոսկոպիա, ապա այն պետք է լինի որակապես երաշխավորված, և *H. Pylori* –ի ցածր տարածվածությամբ երկրներում այն ժխտում է կերակրափողային նշանակալի պաթոլոգիաները:

Խորհուրդ 4

***H. Pylori* գաստրիտը կարող է բարձրացնել կամ ցածրացնել թթվի արտազատումը: Բուժումը լրիվ կամ մասնակի կարող է վերականգնել այդ ազդեցությունը:**

Ապացուցողական աստիճանը՝ բարձր. Խորհրդի մակարդակը՝ բարձր

Ոչ ատրոֆիկ անտրալ գաստրիտով պացիենտների մոտ ստամոքսափայտի արտազատումը բարձրացած է՝ պայմանավորված խորշում ցածր սոմատոստատինով և գաստրինի բարձր մակարդակով, առողջ մարդկանց հետ համեմատած: Այս խմբին կլինիկորեն առավել բնորոշ է 12-մ.ա. խոցը և ոչ խոցային դիսպեպսիան [17]: Ատրոֆիկ գաստրիտով պացիենտների մոտ /երբ ներառված են խորշը և մարմինը/՝ ընդհակառակը, թթվայնությունն իջած է: Այս ֆենոտիպը նույնականացված է ստամոքսի պրոքսիմալ խոցի, խորացած նախաքաղցկեղային ախտահարումների և ստամոքսի քաղցկեղի բարձր ռիսկի հետ [18,19]: Գաստրիտի այս երկու ձևերի դեպքում էլ *H. Pylori* –ի բուժումը հանգեցնում է լավացման և բարձր կամ ցածր թթվայնության մասնակի կարգավորման: Այդպիսի կարգավորում չի դիտվում արտահայտված ատրոֆիայի դեպքում [20-23]: Բուժումից հետո բարձրացած թթվայնությունը համարվում է ԳԷՌՀ վատացնող գործոն այն պացիենտների մոտ, ովքեր ի սկզբանե ունեն թուլացած մուտքային սեղման [23-28]: Սակայն, մեծամասամբ, *H. Pylori* –ի բուժումից հետո առաջացած թթվայնության փոփոխությունները չունեն ապացուցված կլինիկական նշանակություն և չպետք է դիտարկվեն որպես *H. Pylori* –ն բուժելու կամ չբուժելու փաստարկ:

Խորհուրդ 5

H. Pylori գաստրիտը ինքնուրույն միավոր է և որոշ պացիենտների մոտ առաջացնում է դիսպեպտիկ ախտանիշներ: H. Pylori էռադիկացիան հանգեցնում է դիսպեպսիայի երկարատև լավացման մոտ 10% պացիենտների մոտ՝ համեմատած պլացեբոյի կամ թթվամարիչ թերապիայի հետ:

Ապացուցողական աստիճան՝ միջին. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

ԱՀԿ-ում ներկայումս մշակվող ՀՄԴ-11-բետան և H. Pylori գաստրիտի Կիոտոյի համընդհանուր կոնսենսուսը [4] առաջարկում են գաստրիտները դասակարգել ըստ պատճառական գործոնների, որոնք են՝ 1) H. Pylori ինդուկցված, 2) դեդորայքով ինդուկցված և 3) աուտոիմուն: H. Pylori գաստրիտը դիսպեպսիայի ինքնուրույն պատճառ է և, հետևապես, օրգանական հիվանդություն է [29,30]: Դա հակասում է Հռոմի III կոնսենսուսին, որը համարում է H. Pylori ասոցիացված դիսպեպսիան ֆունկցիոնալ դիսպեպսիա [31]:

H. Pylori դրական շատ անձիք չունեն ախտանշաններ, բայց որոշների մոտ վերջինս կարող է հանդիսանալ ախտանշանների պատճառ: Սուր բժշկահարույց կամ ինքնավարակման դեպքերում H. Pylori-ն կարող է գործարկել սուր դիսպեպտիկ ախտանշաններ [32,33]: Սակայն, չնայած որ կայուն գաղութացումը միշտ հանգեցնում է քրոնիկական գաստրիտի, պացիենտների մեծ մասի մոտ այդ դեպքում ախտանշաններն անցողիկ են:

Համաճարակաբանական աշխատանքներով ցույց է տրվել, որ գոյություն ունի փոխկապակցվածություն H. Pylori ինֆեկցիայի և դիսպեպտիկ ախտանշանների միջև [34-37], սակայն որոշ այլ գործոններ ավելի կարևոր են: H. Pylori –ի դերի մասին առավել համոզիչ ապացույցներ են ստացվել չհետազոտված կամ ֆունկցիոնալ դիսպեպսիա ունեցող վարակված պացիենտների էռադիկացիայի հետազոտություններում [13,38-40]: Այդ հետազոտությունների տվյալներով, էռադիկացիան տալիս է փոքր, բայց վիճակագրորեն հավաստի առավելություն ախտանիշների վերահսկման առումով՝ համեմատած էռադիկացիա չկատարելու

հետ (բուժման համար անհրաժեշտ թիվը՝ NNT=14): Այս օրհանգստային ձեռքբերման համար անհրաժեշտ է առնվազն 6 ամիս ժամկետ, որպեսզի այն լինի հավաստիորեն բարձր առանց էոզոֆագիալի խմբի, և դա վերագրվում է այն ժամանակին, որը պետք է գաստրիտը լավանալու համար [38-40]:

Խորհուրդ 6

Ֆունկցիոնալ դիսպեպսիայի վստահելի օրհանգստային ձեռքբերումն առաջ պետք է բացառել H. Pylori գաստրիտը:

Ապացուցողական ասպիրին՝ բարձր. Խորհրդի մակարդակը՝ բարձր

Դիսպեպսիկ օրհանգստայինները շատ հաճախ են հանդիպում և կարող են վերին ստամոքսաղիքային ուղու տարբեր օրհանգստայինների դրսևորում լինել: Երբ դիսպեպսիկ պացիենտին չեն կատարել օրհանգստային հետազոտություններ, այդ վիճակը կոչվում է չհետազոտված դիսպեպսիա: Եթե կատարվել է էնդոսկոպիա, ապա հնարավոր են տարբեր օրհանգստայիններ՝ ներառյալ ԳԷՌՀ և պեպտիկ խոց: Եթե էնդոսկոպիկ հետազոտությամբ չեն հայտնաբերվում լորձաթաղանթի վնասումներ, ապա օրհանգստային է ֆունկցիոնալ դիսպեպսիա:

H. Pylori գաստրիտը ինֆեկցիոն հիվանդություն է, որը բոլոր վարակվածների մոտ հանգեցնում է տարբեր ծանրության քրոնիկական ակտիվ գաստրիտի առաջացման [41]: H. Pylori ինֆեկցիայի բուժումն առողջացնում է ստամոքսի բորբոքված լորձաթաղանթը [5, 42-44]: Հետևաբար, իրական ֆունկցիոնալ դիսպեպսիա կարելի է օրհանգստային միայն H. Pylori բացակայության դեպքում: Դա կարող է լինել կամ H. Pylori գաստրիտի առաջնային բացառման, կամ էլ հաջողակ էոզոֆագիալի հաստատման միջոցով:

Խորհուրդ 7

Ասպիրինի և ՈՍՀԲՊ օգտագործումը H. Pylori վարակված պացիենտների մոտ բարձրացնում է խոցային հիվանդության առաջացման ռիսկը: Հակակոագուլյանտները /ասպիրին, կումարիններ, նոր պերորալ

հակակոագուլյանտներ/ բարձրացնում են արյունահոսության ռիսկը՝ պեպտիկ խոցով հիվանդների մոտ:

Ապացուցողական ասփիճանը՝ բարձր . Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

H. Pylori-ն, ՈՍՀԲՊ և ասպիրինը հանդիսանում են պեպտիկ խոցի և դրա բարդությունների անկախ ռիսկի գործոններ [45,46]: Մեկ մեթավերլուծությունը ցույց է տվել, որ H. Pylori վարակված անձանց մոտ ՈՍՀԲՊ օգտագործումը բարձրացնում է պեպտիկ խոցի առաջացման ռիսկը [45]: Վերջերս կատարված մեկ համաճարակաբանական հետազոտություն ցույց է տվել, որ H. Pylori ինֆեկցիան և ՈՍՀԲՊ օգտագործումը խոցային արյունահոսության համար ունեն ադիտիվ ազդեցություն [46]: 5 ռանդոմիզացված կլինիկական աշխատանքների և ավելի նոր կատարված հետազոտությունների [48] մեթավերլուծությունը [47] ցույց է տվել, որ H. Pylori էռադիկացիան նույնականացված է պեպտիկ խոցի նվազած հիվանդացության հետ՝ ՈՍՀԲՊ նոր օգտագործողների, բայց ոչ երկարատև օգտագործողների մոտ: Չկան հասանելի տվյալներ կոքսիբներ օգտագործողների մոտ H. Pylori էռադիկացիայի ազդեցության վերաբերյալ:

Ցածր դեղաչափով ասպիրին օգտագործողների մոտ H. Pylori էռադիկացիայի ազդեցությունը պեպտիկ խոցի կամ դրա արյունահոսության առաջացման ռիսկի վերաբերյալ հակասական են: Չնայած նրան, որ H. Pylori էռադիկացիան ացետիլսալիցիլաթթու օգտագործողների մոտ նվազեցնում է խոցային արյունահոսությունը [49-51], սակայն ավելի նոր մեթավերլուծությունը վկայում է, որ չկան բավարար փաստեր եզրակացնելու համար, որ այս վարակը հանդիսանում է ԱՍԹ օգտագործողների մոտ խոցային արյունահոսության ռիսկի գործոն [52]: Ավելին, վերջին համաճարակաբանական հետազոտությունը չի հայտնաբերել ԱՍԹ-ի և H. Pylori -ի միջև ավելացնող կամ պոտենցվող արդյունքներ, սակայն նրանք երկուսն էլ հանդիսանում են խոցային արյունահոսության անկախ գործոններ [46]:

Նոր փաստերը վկայում են այն մասին, որ ոչ ասպիրինային հակաազրեգանտների կամ հակակոագուլյանտների օտագործումը ևս բարձրացնում է պեպտիկ խոցի արյունահոսության ռիսկը [53]:

Քանի որ *H. Pylori* -ն հանդիսանում է պեպտիկ խոցի արյունահոսության անկախ ռիսկի գործոն, ապա տրամաբանական է ենթադրել, որ *H. Pylori* –ով վարակված անձիք կարող են ունենալ խոցային արյունահոսության ավելի բարձր ռիսկ այդ ոչ խոցային դեղամիջոցներից, քան ոչ վարակվածները:

Խորհուրդ 8

Անամնեզում պեպտիկ խոց ունեցող ասպիրին և ՈՍՀԲՊ օգտագործողների մոտ պետք է կատարել *H. Pylori* հետազոտություն:

Ապացուցողական ասպիրին՝ միջին. Խորհրդի մակարդակը՝ բարձր

ՈՍՀԲՊ-ն, ասպիրինը և *H. Pylori* –ն հանդիսանում են պեպտիկ խոցի և դրա բարդությունների անկախ ռիսկի գործոններ [45,46]: Անամնեզում պեպտիկ խոց կամ խոցային արյունահոսություն ունեցող պացիենտներն ասպիրին, կոքսիբ կամ ՈՍՀԲՊ ստանալու դեպքում ունեն վերին ստամոքսաղիքային արյունահոսության առավել բարձր ռիսկ [46,54]: Մի քանի կլինիկական փորձարկումներ [49,55,56] և մեկ դիտարկային հետազոտություն [50]՝ կատարված այս բարձր ռիսկով չինացի պացիենտների մոտ, ցույց են տվել, որ *H. Pylori* էռադիկացիան նվազեցնում, բայց չի վերացնում վերին ստամոքսաղիքային արյունահոսության ռիսկը և այն նվազեցնելու համար ՊՊԻ-ով միաժամանակյա թերապիան դեռևս մնում է անհրաժեշտ: Հետևաբար՝ ՊՊԻ-ով բուժումը անհրաժեշտ է նրանց մոտ, ովքեր խոցային արյունահոսությունից հետո ստանում են ՈՍՀԲՊ, կոքսիբներ կամ նոյնիսկ ցածր դեղաչափով ասպիրին և, եթե վարակված են, ապա և *H. Pylori* էռադիկացիա [49,55,56]:

Խորհուրդ 9

ՊՊԻ երկարատև բուժումը խախտում է H. Pylori գաստրիտի տոպոգրաֆիան: H. Pylori էռադիկացիան ՊՊԻ-ի երկարատև օգտագործողների մոտ հանգեցնում է գաստրիտի ապաքինմանը:

Ապացուցողական աստիճան՝ ցածր. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

H. Pylori գաղութացված և նույնականացված գաստրիտի տեղակայումները կախված են թթվայնության մակարդակից: Թթվայնության նորմալ կամ բարձր մակարդակի դեպքում մանրէային գաղութացումը և գաստրիտը գլխավորապես սահմանափակվում են ստամոքսի անտրալ հատվածով: Ցածր թթվայնության դեպքում մանրէային գաղութացումը և գաստրիտն առկա են նաև ստամոքսի մարմնում, ինչը հանգեցնում է առավելապես մարմնի պանգաստրիտի: Տեղակայման այս առանձնահատկությունները կախված են միայն թթվայնության մակարդակից՝ անկախ դրա հիմքում գտնվող պատճառներից, ինչպիսիք են գեղձերի կորուստը, վագոտոմիան կամ թթվայնությունը խորապես ընկճող թերապիան: Վերջինիս դեպքում անտրալ գաստրիտի վերածումն առավելապես մարմնի ախտահարմամբ պանգաստրիտի սկսում է բուժումը սկսելուց հետո օրերի կամ շաբաթների ընթացքում [57] և պահպանվում է բուժման ամբողջ ընթացքում [58-60]: H. Pylori էռադիկացիան բուժում է գաստրիտը՝ անկախ հակասեկրետոր թերապիայի շարունակությունից [42,61]:

Պոպուլյացիոն մակարդակում H. Pylori և ԳԷՌ-Հ բացասական նույնականացված են և դա առավել նկատելի է H. Pylori ցիտոկին ասոցիացված գենի արգասիքի /CagA/ հանդեպ դրական շտամների պարագայում [62]: 26 հետազոտությունների ամփոփումը ցույց է տվել, որ ԳԷՌ-Հ պացիենտների մոտ H. Pylori վարակի հաճախականությունը 39% է, իսկ ստուգիչ խմբում՝ 50% [63]: Նմանապես, ԳԷՌ-Հ բարդությունները, ինչպիսիք են Բարետի կերակրափողը և կերակրափողի ադենոկարցինոման, նույնպես ավելի հազվադեպ են վարակված պացիենտների մոտ [64]: Սակայն ինֆեկցված պացիենտների պոպուլյացիայում H. Pylori էռադիկացիան չի առաջացնում կամ ծանրացնում ԳԷՌ-Հ -ն [65-68]: Հետևաբար՝ ԳԷՌ-Հ -ի առկայությունը չպետք է խանգարի H. Pylori էռադիկացիային, որտեղ

այն ցուցված է: Ի հավելումն՝ ԳԷՌՀ-ի ՊՊԻ-ով շարունակական բուժման երկարատև արդյունավետությունը կախված չէ *H. Pylori* կարգավիճակից [42,69]: Հետաքրքիր երևույթ է դիտարկվել, երբ որոշ *H. Pylori*-դրական պացիենտների մոտ հանկարծակի առաջացել է անցողիկ էպիգաստրալ ցավ՝ ռեֆլյուքսի դեմ սկսված ՊՊԻ-ով թերապիայից կարճ ժամանակ անց [70], բայց դա նույնպես չի կարող ազդել բուժումը սկսելու որոշման վրա և ավելի շատ հետազոտություններ են անհրաժեշտ այդ երևույթը բացատրելու համար:

Խորհուրդ 10

Կան ապացույցներ, որ *H. Pylori* -ն կարող է կապված լինել անբացատրելի երկաթ անբավարարության անեմիայի /ԵԱԱ/, իդիոպաթիկ թրոմբոցիտոպենիկ պուրպուրայի /ԻԹՊ/ և վիտամին B12-ի անբավարարության հետ: Այդ հիվանդությունների ժամանակ պետք է ստուգել և էռադիկացնել *H. Pylori*-ն:

Ապացուցողական մակարդակ՝ շատ ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Մեծահասակ և մանկական պոպուլյացիայում վստահաբար հաստատվել է *H. Pylori* –ի նույնականացումը ԵԱԱ հետ-ի [71]: Վերջին շրջանում կատարված մեթավերլուծությունները ցույց են տվել, որ *H. Pylori* էռադիկացիան լավացնում է անեմիան և բարձրացնում է հեմոգլոբինի մակարդակը՝ հատկապես միջին կամ ծանր աստիճանի անեմիայով պացիենտների մոտ [72,73]: Այժմ ԵԱԱ-յի վարման վերջին ազգային ուղեցույցներն առաջարկում են *H. Pylori* էռադիկացիա կրկնվող ԵԱԱ պացիենտների մոտ, եթե նրանց էզոֆագոգաստրոսկոպիկ և կոլոնոսկոպիկ տվյալները նորմալ են [74]:

ԻԹՊ-ով մեծահասակների մոտ վերջերս կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ որոշ պացիենտների մոտ թրոմբոցիտների մակարդակը բարձրանում է *H. Pylori* էռադիկացիայից հետո, և այդ պատասխանի տոկոսը բարձր է այն երկրներում, որտեղ առկա է *H. Pylori* բարձր տարածվածություն

ազգաբնակչության շրջանում [75]: Ատրոֆիկ գաստրիտով ԻԹՊ-ով պացիենտներն ավելի լավ են պատասխանում էռադիկացիոն թերապիային [7]: ԻԹՊ-ի վարման փոխհամաձայնեցված ուղեցույցներըն առաջարկում են վարակված պացիենտներին (համաձայն շնչական ուրեազային թեստի, կղանքում հակաձնի կամ էլ էնդոսկոպիկ թեստերի տվյալների) կատարել էռադիկացիոն թերապիա, ինչպես նաև ԻԹՊ-ով պացիենտների մոտ կատարել H. Pylori սքրինինգ՝ այն դեպքերում, եթե դրական թեստերի արդյունքում այդ հիվանդների մոտ կկատարվի էռադիկացիոն թերապիա [76,77]: Այս ուղեցույցները ներկայումս խորհուրդ չեն տալիս քրոնիկական ԻԹՊ ունեցող երեխաների մոտ H. Pylori ռուտին հետազոտումը՝ հիմնվելով գրականության հակասական տվյալների վրա, չնայած որ կան որոշ աշխատանքներ, որոնք ենթադրում են, որ վարակի էռադիկացիան կարող է արդյունավետ լինել ԻԹՊ-ով երեխաների մոտ [78]:

Շտապազոտությունները ցույց են տվել փոխկապակցվածություն H. Pylori-ի և վիտամինների մալաբսորբցիայի միջև՝ ներառյալ վիտամին B12-ի արսորբցիան, ինչը հանգեցնում է շիճուկում հոմոցիստեինի կուտակման [79]:

Խորհուրդ 11

Նկարագրվել է H. Pylori –ի դրական կամ բացասական կապը տարբեր արտաստամոքսաղիքային հիվանդությունների հետ: Այդ համակցությունների պատճառահետևանքային կապը H. Pylori հետ հաստատված չէ:

Ապացուցողական աստիճանը՝ միջին. Խորհրդի մակարդակը՝ միջին

Ի հավելումն՝ H. Pylori ինֆեկցիան և CagA դրական լինելը համակցված է աթերոսկլերոզի հետ [80-83]: Շտաքրքիր համակցություններ են նաև նկատվել H. Pylori-ի և տարբեր նյարդաբանական պաթոլոգիաների միջև՝ այդ թվում ինսուլտի, Ալցհեյմերի հիվանդության և իդիոպաթիկ Պարկինսոնի հիվանդության [84-87]: Այնուամենայնիվ, այդ համակցությունները բավարար չեն H. Pylori-ն

որպես պատճառական գործոն համարելու և բուժման մարտավարություն առաջարկելու համար:

Հակադարձ համակցություն է նկարագրված որոշ երկրներում՝ *H. Pylori* տարածվածության նվազման և ճարպակալման ու ասթմայի հաճախականության բարձրացման միջև [88]: Ընդարձակ, պոպուլյացիոն հիմքով ճապոնական հետազոտությունում *H. Pylori* էռադիկացիան համակցված էր մարմնի զանգվածի դասիչի հետագա հավաստի բարձրացման հետ[89]: Հետազոտությունների մի շարք էլ ցույց է տվել բացասական համակցության առկայություն *H. Pylori*-ի գաղութացման և ասթմայի ու այլ առոպիկ վիճակների միջև:

Խորհուրդ 12

***H. Pylori* էռադիկացիան հանդիսանում է տեղայնացված աստիճանի ստամոքսային MALT- ոմայի առաջին գծի թերապիա:**

Ապացուցողական աստիճանը՝ միջին . Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

Տեղայնացված աստիճանի ստամոքսային MALT-ոման հաստատուն կերպով նույնականացված է *H. Pylori*-ի վարակի հետ: Վաղ փուլի (I/II ըստ Լուգանոյի), ցածր աստիճանի MALT լիմֆոման կարելի է լիակատար բուժել *H. Pylori* էռադիկացիայի միջոցով՝ պացիենտների 60-80 տոկոսի մոտ [90]: Երբ լիմֆոման պարունակում է a t /11,18/ տեղայնացում, *H. Pylori* էռադիկացիան սովորաբար արդյունավետ չէ [90], և այդ պացիենտները կարիք ունեն լրացուցիչ և այլընտրանքային բուժման: Ստամոքսային MALT-ոմայով պացիենտները գտնվում են ստամոքսի ադենոկարցինոմայի զարգացման բարձր ռիսկի խմբում [91] և նրանց մեծամասնությունն ունի նախաքաղցկեղային ստամոքսային ախտահարման նշաններ [92]: *H. Pylori* էռադիկացիայից հետո բոլոր պացիենտները պետք է գտնվեն ինտենսիվ հսկողության ներքո [93] և ստանան այլընտրանքային թերապիա /քիմիաթերապիա կամ ռադիոթերապիա/, եթե լիմֆոման չի պատասխանում բուժմանը կամ զարգանում է:

Ախտորոշում

Խորհուրդ 1

«Ստուգիր և բուժիր» ռազմավարությունում շնչառական ուրեազային թեստը /ՇՈԻԹ/ ամենաշատ ուսումնասիրված և լավագույնս առաջարկված ոչ ինվազիվ թեստն է: Մոնոկլոնալ կղանքային հակազենային թեստը /ԿՀԹ/ ևս կիրառելի է: Շճաբանական թեստերը կարելի է կիրառել միայն հաստատումից հետո: Արագ շճաբանական թեստերը, որոնց ժամանակ օգտագործվում է ամբողջական արյունը, այս տեսանկյունից պետք է բացառվեն:

Ապացուցողական աստիճան՝ 2a. Խորհրդի մակարադակ՝ B

13C-ՇՈԻԹ-ը հանդիսանում է H. Pylori-ի ախտորոշման լավագույն մոտեցումը, ունի բարձր զգայունություն, առանձնահատկություն և գերազանց արդյունքներ է ցուցաբերում [94-96]: 12 ռանդոմիզացված կլինիկական հետազոտություններում, որոնցում «ստուգիր և բուժիր» ռազմավարությունը համեմատված է ԷԳԴՍ-ի և ՊՊԻ-ով բուժման հետ՝ 8-ում կիրառվել է ՇՈԻԹ /66%/, 4-ում շճաբանական թեստը /33%/ և ոչ մեկում՝ ԿՀԹ:

14C-ՇՈԻԹ-ը ևս առաջարկվում է՝ ելնելով դրա ցածր արժեքից, բայց քանի որ այդ ժամանակ պացիենտները ենթարկվում են ճառագայթման, ապա այն չի կիրառվում երեխաների և հղիների մոտ [97]: Որոշ երկրներում ԿՀԹ-ն կարող է լինել քիչ ընդունելի, բայց այն նույնպես բարձր զգայունություն և առանձնահատկություն ունի, եթե կիրառվում է մոնոկլոնալ հակամարմինների վրա հիմնված ELISA [98]: Չկան «ստուգիր և բուժիր» ռազմավարության ԷԳԴՍ-ի և ՊՊԻ-ով բուժման հետ համեմատող ռանդոմիզացված կլինիկական հետազոտություններ, որոնցում կիրառվել է ԿՀԹ [94]:

Որոշ շճաբանական թեստեր ունեն բարձր զգայունություն և առանձնահատկություն [99,100], բայց տարբեր աշխարհագրական տեղանքներում դրանք պետք է կատարվեն տարբեր կերպ՝ ելնելով շրջանառվող շտամների հակազենային կազմից: Այսպիսով, պետք է կիրառել միայն տեղային

հաստատված թեստերը: Դա կարելի է անել՝ հետազոտելով այն պացիենտների շիճուկը, որոնց մոտ ինվազիվ մեթոդներով ապացուցված է *H. Pylori*-ի առկայությունը: Ինչ վերաբերում է այլ թեստերին, ապա դրանց կանխատեսող արժեքները մեծապես կախված են վարակի տարածվածության հետ:

Ամբողջական արյան օգտագործմամբ արագ («պացիենտի կողքին») շճաբանական թեստերը կարող էին հեշտացնել «ստուգիր և բուժիր» ստրատեգիայի կիրառումն ընդհանուր պրակտիկայում, սակայն դրանք դեռ հավանության չեն արժանացել, քանի որ ունեն անբավարար զգայունություն և առանձնահատկություն [101]:

Խորհուրդ 2

ՊՊԻ օգտագործումը պետք է դադարեցվի *H. Pylori* –ի հետազոտելուց նվազագույնը 2 շաբաթ առաջ, իսկ բիսմութի և հակաբիոտիկների օգտագործումը՝ նվազագույնը 4 շաբաթ առաջ:

Ապացուցողական աստիճան՝ 2B. Խորհրդի մակարդակը՝ B

ՊՊԻ-ն ունեն հակահելիկոբակտերային ակտիվություն և նվազեցնում են *H. Pylori* –ի ծանրաբեռնվածությունը՝ հանգեցնելով ուրեազային թեստի, ՇՈԻԹ-ի և ԿՀԹ-ի ժամանակ կեղծ բացասական արդյունքի [102]: Առավել ևս՝ մանրէն կարող է ընկճել ուրեազային ակտիվությունը [103]: 14 օրը համարվում է անվտանգ ժամանակահատված, մինչդեռ ցույց է տրված, որ 7 օրը ևս կարող է բավարար լինել [104]:

Ցույց է տրված, որ H2 ընկալիչների անտագոնիստներն ունեն նվազագույն ազդեցություն ՇՈԻԹ զգայնության վրա, իսկ անտացիդները չեն ազդում ՇՈԻԹ-ի և ԿՀԹ-ի զգայնության վրա: H2 անտագոնիստները չունեն հակահելիկոբակտերային ակտիվություն [105-107]: Ի տարբերություն դրանց, բիսմութի և հակաբիոտիկների հակամանրէային ակտիվության հետևանքով դրանց կիրառումը պետք է դադարեցնել նվազագույնը 4 շաբաթ առաջ, որպեսզի

ստեղծվի հնարավորություն՝ որոշվող մանրէային ծանրաբեռնվածության մակարդակը բարձրանալու համար:

Խորհուրդ 3

Կլինիկական պրակտիկայում, երբ կան էնդոսկոպիկ հետազոտության ցուցումներ և չկան բիոպսիայի հակացուցումներ՝ որպես առաջին գծի ախտորոշիչ թեստ, խորհուրդ է տրվում արագ ուրեազային թեստը /ԱՈւԹ/: Թեստի դրական լինելու դեպքում կարելի է անհապաղ սկսել բուժումը: Մեկական բիոպսիա պետք է կատարել մարմնից և անտրումից: Բուժումից հետո խորհուրդ չի տրվում ԱՈւԹ կատարել՝ բուժման արդյունավետությունը գնահատելու նպատակով:

Ապացուցողական աստիճան՝ 2B. Խորհրդի մակարդակը՝ B

ԱՈւԹ-ի զգայունությունը մոտավորապես 90% է, առանձնահատկությունը՝ 95-100% [108,109]: Կեղծ դրական արդյունքը բնորոշ չէ, իսկ կեղծ բացասական արդյունք կարող է դիտվել վերջերս տեղի ունեցած ստամոքսաղիքային արյունահոսությունից, բիսմութ, ՊՊԻ, հակաբիոտիկներ օգտագործելուց հետո կամ էլ արտահայտված ատրոֆիայի և աղիքային մետապլազիայի դեպքում: ԱՈւԹ կարելի է կատարել բիսմութ և հակաբիոտիկներ օգտագործելուց 4 շաբաթ և ՊՊԻ օգտագործելուց 2 շաբաթ հետո [102,110,111]:

Անտրալ հատվածից և հատակից բիոպսիա վերցնելը կարող է բարձրացնել թեստի զգայունությունը [111,112]: Քանի որ կեղծ բացասական արդյունքն ավելի հաճախ է հանդիպում, քան կեղծ դրականը, ապա բացասական արդյունքը չի բացառում *H. Pylori* –ի առկայությունը: Կեղծ դրական արդյունքն ավելի հազվադեպ է լինում և կարող է պայմանավորված լինել ուրեազա պարունակող այլ մանրէներով, ինչպես օրինակ, *Proteus mirabilis*, *Citobacter freundii*, *Klebsiella pneumoniae*, *Enterobacter cloacae* և *Staphylococcus aureus* [113]:

ԱՈւԹ կատարելու հիմնական առավելությունն արագ պատասխան ստանալն է, ինչը շատ կիրառելի է՝ անհապաղ բուժում սկսելու համար:

Խորհուրդ 4

H. Pylori գաստրիտի գնահատման համար բիոպսիաների նվազագույն քանակն է. 2 անտրումից /մեծ և փոքր կորույթունից՝ պիլորիկ հատվածից 3 սմ պրոքսիմալ/, 2 մարմնի միջին հատվածից: Նախաքաղցկեղային ախտահարումները հայտնաբերելու համար լրացուցիչ բիոպսիա է պետք կատարել կտրված հատվածից:

Ապացուցողական աստիճան՝ 2B. Խորհրդի մակարդակը՝ B

Հայտնի է, որ ատրոֆիան և աղիքային մետապլազիան ավելի ծանր են արտահայտված փոքր կորույթան մոտ, քան մեծի [114]: Անտրումում այդ ախտահարումները, բացի H. Pylori-ից, կարող են ունենալ տարբեր այլ պատճառներ, մինչդեռ մարմնի լորձաթաղանթի փոփոխությունները առավելապես պայմանավորված են առկա կամ բուժված H. Pylori-ով [115-117]: Համաձայն Սիդնեյի նորացված համակարգի՝ բիոպսիան պահանջվում է կատարել մեծ և փոքր կորույթունից [118], անտրումից և մարմնից [119]: Այլ աշխատանքներում ցույց է տրված, որ երկու անտրալ բիոպսիաները /ստորին կտրվածքի շրջանից ներքև և մեծ կորույթունից/ բավարար են H. Pylori –ին որոշելու համար [120]: Satoh et al [121] ցույց են տվել, որ նույնիսկ մեկ բիոպսիան մեծ կորույթունից բավարար է և անտրումի ծանր ատրոֆիայով պացիենտների մոտ այն նախընտրելի է՝ փոքր կորույթունից կամ կտրվածքից արված բիոպսիայից: Դուռդենալ խոցով պացիենտների մոտ H. Pylori –ի գաղութացումը առավել խիտ է անտրումում, քան մարմնում [122-126], և H. Pylori գաղութացման խտությունը որոշելու համար խորհուրդ է տրվում կատարել անտրալ բիոպսիա:

Ցույց է տրված, որ H. Pylori որոշման և ատրոֆիայի գնահատման համար բիոպսիայի լավագույն հատվածներն են անտրումի միջին հատվածը՝ փոքր և մեծ կորույթան մասերում, ինչպես նաև մարմնի միջին հատվածը՝ մեծ և փոքր կորույթուններում [121]: Այս կարծիքը սատարում է նաև նորացված Սիդնեյան համակարգը [118], և այս հատվածները համընկնում են ԱՌԹ-ի համար բիոպսիայի լավագույն հատվածների հետ, որոնք են մարմինն ու կտրվածքը [120]:

Կարելի է եզրակացություն կատարել, որ ստամոքսի բիոպսիայի համար առավել ընդունելի հատվածը փոքր կորության հատվածում կտրվածքի շրջանն է:

Ստամոքսի պոլիպների հայտնաբերման դեպքում՝ բացի գաստրիտի գնահատման համար կատարվող բիոպսիայից, պետք է կատարել նաև պոլիպից մի քանի բիոպսիաներ, ինչը բավական է հյուսվածաբանական ճշգրիտ գնահատական տալու համար: Հետագա միջամտությունների ծավալը կարող է պլանավորվել՝ կախված հյուսվածաբանական պատասխանից [109,127,128]:

Խոցոտումների և կասկածելի օջախային վնասումների դեպքում կարիք կա հետագա բիոպսիաների: Նոր էնդոսկոպիկ տեխնիկաները՝ մեծացնող էնդոսկոպիայի հետ միասին թույլ են տալիս կատարել առավել բարձր ճշգրտությամբ թիրախավորված բիոպսիաներ և կարող են փոխել ստանդարտ մոտեցումները [129]:

Խորհուրդ 5

H. Pylori ինֆեկցիայի դեպքերի մեծ մասը կարելի է ախտորոշել միայն ստամոքսի լորձաթաղանթի բիոպտատի հյուսվածաքիմիական հետազոտությամբ: Քրոնիկական /ակտիվ/ գաստրիտի դեպքում, երբ H. Pylori –ն հնարավոր չէ որոշել հյուսվածաքիմիական հետազոտությամբ, կարելի է կիրառել իմունահյուսվածաքիմիական եղանակը՝ որպես օժանդակ թեստ: Ստամոքսի նորմալ լորձաթաղանթի դեպքում կարիք չկա կատարել իմունահյուսվածաքիմիական հետազոտություն:

Ապացուցողական աստիճան՝ 2b. Խորհրդի մակարդակը՝ A

H. Pylori գաստրիտի գնահատման համար հյուսվածաքիմիական հետազոտությունը համարվում է ստանդարտ: Իմունահյուսվածաքիմիական հետազոտության կիրառման փաստարկ է հանդիսանում այն, որ այդ դեպքում

կարճանում է մանրէի հայտնաբերման ժամանակը, հատկապես, դրա ցածր մակարդակի դեպքում: Սակայն իմունահյուսվածաքիմիական հետազոտությունը թանկ է հյուսվածաքիմիայից և հասանելի է ոչ բոլոր լաբորատորիաներում: Որոշ հետազոտություններում առաջարկում են ռուտին կերպով կիրառել իմունահյուսվածաքիմիական հետազոտությունը, քանի որ հեմատոքսիլին-էոզինային ներկումը ցուցաբերել է 42-99% զգայունություն և 100% առանձնահատկություն՝ համեմատած իմունահյուսվածաքիմիական հետազոտության (ԻՀՔ) հետ [130-135]: Մինչդեռ այլ աշխատանքներում դա խորհուրդ չի տրվում, քանի որ հայտնաբերվել է ԻՀՔ մեթոդի 97/98% զգայունություն և 90/100% առանձնահատկություն՝ համապատասխանաբար Գենտայի և հեմատոքսիլին-էոզինով ներկման հետ համեմատած [136,137]: Մյուս կողմից, ԻՀՔ ներկումը *H. Pylori* –ի առումով ավելի ցածր տատանումներ է ցուցաբերում տարբեր հետազոտողների գնահատականների միջև, քան հյուսվածաքիմիական ներկերը [136-138]:

Հկուսվածաբանական ներկերով ստացված տվյալները առավել հաճախ կեղծ բացասական են լինում *H. Pylori* –ի ցածր մակարդակի դեպքում [131], մինչդեռ այն դեպքերում, երբ չկա քրոնիկական գաստրիտ, նման բացասական տվյալներ ստացվում են նույնիսկ իմունահյուսվածաքիմիական մեթոդն օգտագործելիս [131-133]: Այսպիսով՝ իմունահյուսվածաքիմիայի կիրառումը կարող է սահմանափակվել միայն քրոնիկական գաստրիտի (ակտիվ կամ ոչ ակտիվ), ատրոֆիկ գաստրիտի (արտահայտված աղիքային մետապլազիա) դեպքերով կամ էլ *H. Pylori* –ի բուժումից հետո կրկնակի հետազոտության ժամանակ, երբ հյուսվածաքիմիական ներկումով մանրէներ չեն հայտնաբերվում: *H. Pylori* –ի խտությունը կարող է նաև լինել ցածր կամ էլ միկրոօրգանիզմը կարող է երևալ կոկոիդ տեսքով՝ այն հիվանդների մոտ, ովքեր ստանում են ՊՊԻ:

Խորհուրդ 6

Առաջին գծի ստանդարտ՝ կլարիտրոմիցինի վրա հիմնված թերապիայի դեպքում խորհուրդ է տրվում որոշել կլարիտրոմիցինի նկատմամբ

զգայունությունը, բացառությամբ այն պոպուլյացիաների կամ տարածաշրջանների, որտեղ ապացուցված է կլարիտրոմիցինի նկատմամբ ցածր ռեզիստենտությունը /<15%/: Այդ թեստը կարելի է կատարել կամ կուլտուրա ստանալուց հետո ստանդարտ եղանակով /հակաբիոգրամ/, կամ էլ ստամոքսի լորձաթաղանթի բիոպատառի մոլեկուլային թեստով:

Ապացուցողական աստիճան՝ շար ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Խորհուրդ 7

Բուժման առաջին անհաջողությունից հետո, եթե կատարվում է էնդոսկոպիա, խորհուրդ է տրվում ստանալ միկրոբային կուլտուրա և կատարել ստանդարտ հակամիկրոբային զգայունության թեստ /ՀՄՁԹ/, բուժումն անհատականացնելու նպատակով, բացառությամբ, եթե նախատեսվում է կատարել բիսմութ հիմնված քառակի բուժում:

Ապացուցողական աստիճան՝ թույլ. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

Մանրէային կուլտուրայի նշանակությունը, գլխավորապես. ՀՄՁԹ կատարելն է՝ կլարիտրոմիցինի, լևոֆլոքսացինի, մետրոնիդազոլի, ռիֆամիցինի և վերջապես, ամոքսիցիլինի և տետրացիկլինի նկատմամբ: Մի քանի հետազոտություններում ցույց է տրված, որ *H. Pylori* –ի զգայունության որոշման վրա հիմնված անհատականացված բուժումը՝ համեմատած ստանդարտ էմպիրիկ եռակի թերապիայի հետ, ավելի լավ էռադիկացիայի արդյունք է տալիս և կարող է լինել գին-արդյունավետ [139,140]: Արժեքի հետ համեմատած արդյունավետությունը կարող է տատանվել՝ տվյալ երկրում բուժման արժեքին համապատասխան:

Կուլտուրայի ստացմամբ և հակաբիոգրամի կատարմամբ ՀՄՁԹ-ի համապատասխանությունը մոլեկուլային թեստի՝ հիմնականում իրական ժամանակային ՊՇՌ-ի հետ, կատարյալ չէ: Մոլեկուլային թեստով հնարավոր է հայտնաբերել հետերոռեզիստենտության /զգայուն և ռեզիստենտ օրգանիզմների խառը պոպուլյացիա/ ավելի շատ դեպքեր, բայց այս փուլում մենք դեռ չունենք

ռեզիստենտ օրգանիզմների բաժնեմասի վերաբերյալ քանակական տվյալներ, որոնք դեռևս կարող են էռադիկացվել տարբեր հակաբիոտիկային զուգակցումներով:

Միաժամանակյա թերապիայի դեպքում կլարիտրոմիցին ռեզիստենտ շտամները կարող են բուժվել այլ հակաբիոտիկով [141]: Սակայն հակաբիոտիկների ճիշտ օգտագործման համատեքստում արդարացված չի թվում որևէ հակաբիոտիկի կիրառումը, որը քիչ արդյունավետ է, կարող է ունենալ կողմնակի ազդեցություններ, ինչպես նաև բարձրացնել բուժման արժեքը: Հետևաբար՝ հնարավորության դեպքում, ավելի լավ է որոշել կլարիտրոմիցինային ռեզիստենտությունը:

Բուժման առաջին անհաջողությունից հետո, եթե կատարվել է գաստրոսկոպիա, մինչև երկրորդ գծի բուժումը սկսելը, բոլոր տարածաշրջաններում խորհուրդ է տրվում ստանալ միկրոբային կուլտուրա և կատարել ստանդարտ հակամիկրոբային զգայունության թեստ /ՀՄՁԹ/, քանի որ մեծ է ռեզիստենտ շտամի առկայության հավանականությունը /կլարիտրոմիցինի համար 60-70%/ [142]: Հակամանրէային զգայունությունը որոշելու համար պետք է կիրառել ստանդարտ մեթոդը /հակաբիոգրամ/, քանի որ միայն այդ եղանակով է կարելի որոշել ոչ միայն կլարիտրոմիցինի, այլ նաև մնացած հակաբիոտիկների նկատմամբ զգայունությունը: Դա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ նախատեսվում է կիրառել լնոֆլոքսացինի վրա հիմնված բուժում, քանի որ որոշ պոպուլյացիաներում ֆտորիսինոլինների նկատմամբ ռեզիստենտությունը շատ բարձր է և մեծապես ազդում է բուժման հաջողության վրա: Հակառակ դրան, եթե կիրառվելու է բիսմութ հիմնված քառակի բուժում, խորհուրդ չի տրվում կատարել ՀՄՁԹ, քանի որ տետրացիկլին ռեզիստենտ շտամներ ունենալու հավանականությունը խիստ ցածր է, իսկ մետրոնիդազոլի նկատմամբ ռեզիստենտությունն ազդեցություն չի գործում [143]:

Խորհուրդ 8

Քարծր ճշտության, տեղային հաստատված շճաբանական թեստերը կարող են կիրառվել որպես H. Pylori –ի ախտորոշման ոչ ինվազիվ մեթոդներ:

Ապացուցողական աստիճան՝ 2a. Խորհրդի մակարդակը՝ B

Շճաբանական հետազոտությունը H. Pylori –ի ախտորոշման ոչ ինվազիվ մեթոդ է: Տարբեր կլինիկական հանգամանքների հետևանքով կարող են լինել կարևոր տեղային փոփոխություններ, որոնք հանգեցնում են ստամոքսում մանրէային ծանրաբեռնվածության պակասեցման և բոլոր ախտորոշիչ մեթոդների զգայունության նվազման՝ բացառությամբ շճաբանականի: Այդպիսի կլինիկական վիճակների թվին են պատկանում ստամոքսաղիքային արյունահոսությունը, ատրոֆիկ գաստրիտը, ստամոքսի MALT լիմֆոման և ստամոքսի քաղցկեղը:

29 վաճառքում առկա H. Pylori շճաբանական փաթեթների համեմատական հետազոտությամբ հաստատվել է, որ դրանցից որոշները գերազանց են և ունեն 90%-ից բարձր զգայունություն և առանձնահատկություն [100]: Այս արդյունքները զգալի առաջընթաց են ներկայացնում՝ համեմատած նախկինում հրապարակված համեմատական հետազոտությունների հետ [144-146]: Հիմնականում, ELISA-ի վրա հիմնված մեթոդները նախընտրելի են արագ, պացիենտի կողքին կատարվող թեստերից, որոնց արդյունքները ներկայումս բավարար չեն:

Քանի որ շճաբանությունը կարող է դրական լինել նաև հետինֆեկցիոն դեպքերում, այն չի կարելի կիրառել որպես էռադիկացիայի արդյունավետությունը որոշելու մեթոդ: Ավելին՝ հակամարմինների ցածր խտության պատճառով, այնպիսի հեղուկներ, ինչպիսիք են մեզը և թուքը, կիրառելի չեն H. Pylori որոշելու համար:

Ելնելով այն հանգամանքից, որ տարբեր պոպուլյացիաներում H. Pylori շտամները տարբեր են, ունեն տարբեր տարածվածություն և ծանրաբեռնվածություն, շճաբանական թեստերը պետք է մշակվեն իդեալական դեպքում տեղային H. Pylori շտամների օգտագործումով, տեղային տիտրերի սահմանումով, և բոլոր շճաբանական կետերը պետք է լոկալ վավերացվեն: Նոր

արագ թեստերը, որոնք ներկայումս գնահատվում են, ապագայում կարող են համապատասխանել օգտագործման համար անհրաժեշտ ճշգրտության ցուցանիշներին: Քանի որ CagA հակամարմինները կարող են մնալ դրական շատ երկար ժամանակ, դրանցով կարելի է որոշել H. Pylori առկայությունը ստամոքսի քաղցկեղի դեպքում, երբ այլ մեթոդները բացասական են:

Խորհուրդ 9

Հասանելի տվյալները վկայում են, որ պեպսինոգենի /ՊԳ/ շճաբանական որոշումը հանդիսանում է ստամոքսի լորձաթաղանթի վիճակի /ատրոֆիկ կամ ոչ ատրոֆիկ/ գնահատման ամենաօգտակար ոչ ինվազիվ թեստը: ՊԳI/ՊԳII հարաբերությունը երբեք չի կարելի ընդունել որպես ստամոքսի նորագոյացության կենսամարկեր:

Ապացուցողական աստիճան՝ 2a. Խորհրդի մակարդակը՝ A

ՊԳ տեստի կանխարգելիչ արժեքը սահմանափակ է այն հիվանդների դեպքում, ում մոտ հայտնաբերվում է անտրալ հատվածով սահմանափակված ատրոֆիա [147]: Ավելին, ինչպես դիտարկվել է Shiotani et al. կողմից, պեպսինոգենի որոշման հուսալիությունը «հստակ կախված է ՊԳ մակարդակի նորմայի շեմային մակարդակից, ինչպես նաև այն սահմանումից, որն օգտագործվում է ատրոֆիան հայտնաբերելու համար» [148]:

Վերջերս՝ որպես դիսպեպտիկ պացիենտների համար «շճաբանական բիոպսիա» առաջարկվել է շճաբանական թեստերի հավաքածու /GastroPanel/, որտեղ ներառված են ՊԳ /ՊԳI, ՊԳII/, գաստրին 17-ը /Գ-17/ և հակա-H. Pylori հակամարմինները [149,150]: Ատրոֆիկ գաստրիտի ցածր տարածվածությամբ պոպուլյացիաներում ատրոֆիկ գաստրիտ ախտորոշելու GastroPanel-ի բացասական կանխատեսող արժեքը բարձր է 97%-ից (95% CI 95% - 99%) [151]:

ՊԳ-ի՝ որպես ատրոֆիկ գաստրիտի մարկերի, ամենավերջին հաստատման քայլերից մեկը կատարվել է Կիոտոյի գլոբալ համաձայնության կոնֆերանսում [4], որտեղ ընդգրկված փորձագետներն աներկբայորեն համաձայնել են հետևյալ

բնորոշման հետ. «Շճաբանական թեստերը /ՊԳԻ և II, հակա-Ռ. Pylori հակամարմիններ/ օգտակար են ստամոքսի քաղցկեղի բարձր ռիսկով պացիենտների հայտնաբերման համար»:

Խորհուրդ 10

ՇՈՒԹ-ը լավագույն եղանակն է գնահատելու համար Ռ. Pylori էռադիկացիան և մոնոկլոնալ ԿՀԹ-ն հանդիսանում է այլընտրանք: Այն պետք է կատարվի բուժումն ավարտելուց առնվազն 4 շաբաթ հետո:

Ապացուցողական աստիճան՝ բարձր. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

ՇՈՒԹ-ը վավեր և հասանելի մեթոդ է էռադիկացիայի արդյունավետությունը գնահատելու համար [152] և ԿՀԹ-ն կարող է կիրառվել որպես այլընտրանք [153]: Կեղծ բացասական տվյալներ կարող են դիտվել ՊՊԻ և հակաբիոտիկներ ստացող պացիենտների մոտ: Էռադիկացիայի արդյունավետությունը որոշելու նպատակով այդ թեստերը պետք է կիրառվեն բուժումն ավարտելուց նվազագույնը 4-8 շաբաթ հետո: ՊՊԻ պետք է դադարեցվեն առնվազն 2 շաբաթ առաջ, քանի որ դրանք ազդում են ՇՈՒԹ և ԿՀԹ զգայունության վրա: Հակաբիոտիկները և ՊՊԻ հանգեցնում են էռադիկացիայից հետո ՇՈՒԹ կեղծ բացասական արդյունքի՝ Ռ. Pylori հանդեպ ունեցած մանրէասպան ազդեցության հետևանքով:

Խորհուրդ 11

Ռ. Pylori էռադիկացիան հանգեցնում է գաստրիտի և ստամոքսի լորձաթաղանթի ատրոֆիայի նկատելի լավացման, բայց չի ազդում աղիքային մետապլազիայի վրա:

Ապացուցողական աստիճան՝ միջին. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

Ստամոքսի քաղցկեղի բազմաստիճան քաղցկեղածին ախտընթացում Ռ. Pylori -ն կարևորագույն դեր ունի: Այդ ախտընթացում ստամոքսի լորձաթաղանթը, մինչև ադենոկարցինոմայի առաջանալն, անցնում է սուր

գաստրիտի, քրոնիկական գաստրիտի, ատրոֆիայի, աղիքային մետապլազիայի և դիսպլազիայի փուլերով /Correa կասկադ/: Տարիներ շարունակ բաց էր մնում հարցը, թե H. Pylori էռադիկացիայից հետո կա արդյոք ստամոքսի լորձաթաղանթի երկարատև բարելավում:

Վերջին տարիներին /2007, 2011 և 2016/ կատարված մեթա-վերլուծություններում [156-158] համակարգային կերպով դիտարկվել են H. Pylori էռադիկացիայի երկարատև ազդեցությունները ստամոքսի հյուսվածաբանության վրա /այսինքն՝ անտրոմում և մարմնում ստամոքսի ատրոֆիայի և աղիքային մետապլազիայի վրա ազդեցությունը/: Երեք մեթա-վերլուծությունների արդյունքներն էլ միանման էին և վկայում էին, որ ստամոքսի ատրոֆիան նկատելի լավանում է, մինչդեռ աղիքային մետապլազիան՝ ոչ:

Բուժում

Խորհուրդ 1

H. Pylori **հակաբիոտիկակայունության աստիճանը բարձրանում է աշխարհի շատ երկրներում:**

Ապացուցողական աստիճան՝ միջին. Խորհրդի մակարդակը՝ խիստ

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ամբողջ աշխարհում ինչպես բարձր, այնպես էլ միջին/ցածր եկամուտով երկրներում բարձրանում է H. Pylori հակաբիոտիկակայուն շտամների բաժնեմասը, ինչը հանգեցնում է էռադիկացիայի արդյունավետության նվազման [159]: Այդպիսի տվյալներ ստացվել են Եվրոպայից, Ճապոնիայից, Կորեայից, Չինաստանից, Իրանից, Հունաստանից, Բուլղարիայից և այլն [160-165]: Ավելին՝ կլարիտրոմիցինային կայունության

մակարդակն Իտալիայում և Ճապոնիայում հասել են ~30%-ի, Թուրքիայում՝ ~40%, Չինաստանում ~50%, մինչդեռ Շվեդիայում և Տայվանում 15% է [159]: Թայվանում վերջերս կատարված հետազոտությունը վերլուծել է կառավարության կողմից ներմուծված հակաբիոտիկների հանդեպ սահմանափակող քաղաքականության ազդեցությունը և պարզել է, որ մակրոլիդների սահմանափակումից հետո դիտվել էր լուֆլոքսացինի հանդեպ կայունության աճ [166]:

Խորհուրդ 2

Այն պոպուլյացիաներում, որտեղ կլարիտրոմիցինային ռեզիստենտության աստիճանը 15%-ից բարձր է, առանց կլարիտրոմիցինային զգայունության նախապես որոշման ՊՊԻ-կլարիտրոմիցին պարունակող սխեմաների կիրառումից պետք է հրաժարվել:

Ապացուցողական աստիճան՝ շարժածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Ստանդարտ եռյակ թերապիայի արդյունավետության նվազման մի քանի բացատրություններ կան. կոմպլեյնս, ստամոքսահյութի բարձր թթվայնություն, մանրէային բարձր ծանրաբեռնվածություն և մանրէային շտամներ, բայց ամենակարևորը կլարիտրոմիցինի նկատմամբ *H. Pylori* ռեզիստենտության բարձրացումն է: Համաձայն Եվրոպական դեղերի գործակալության առաջարկությունների, որոնք վերաբերում են մանրէային ինֆեկցիաների բուժման համար ցուցված բժշկական միջոցների գնահատմանը, կարելի է առանձնացնել մանրէային շտամների երեք խումբ՝ ըստ տվյալ հակաբիոտիկի նկատմամբ ունեցած զգայունության.

I. հիմնականում զգայուն /0-10% կայուն/,

II. փոփոխական զգայուն/10-50% կայուն/

III. հիմնականում ռեզիստենտ / >50% կայուն/:

Բացառությամբ հյուսիսային Եվրոպայի, *H. Pylori* -ն գտնվում է երկրորդ խմբում: Հաշվի առնելով տարածվածությունը և տարածաշրջանային

տարբերությունները, 15%-ն է առաջարկված որպես շեմ՝ տարբերակելու համար կլարիտորումիցինային ռեզիստենտության բարձր և ցածր տարածվածության տարածաշրջանները:

Խորհուրդ 3

Բուժման ցանկացած սխեմայի դեպքում կարելի է կանխատեսել էռադիկացիայի տոկոսը, եթե հայտնի են զգայուն և ռեզիստենտ շտամների բուժման տոկոսները և ռեզիստենտ շտամների տարածվածությունը պոպուլյացիայում: Կոնկրետ հիվանդի դեպքում հակաբիոտիկային ռեզիստենտության մասին կարելի է ենթադրել՝ իմանալով նախկինում նրա կողմից հիմնական հակաբիոտիկներից մեկի օգտագործման մասին, նույնիսկ եթե պոպուլյացիայում դրա հանդեպ կայունության հաճախությունը ցածր է: Զգայունության վրա հիմնված արդյունքները միաժամանակ տալիս են ինչպես անհատի, այնպես էլ պոպուլյացիայի համար տեղեկություն:

Ապացուցողական աստիճան՝ ցածր. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

Պոպուլյացիոն արդյունքները չեն կարող փոխանցվել ռեզիստենտության այլ պատկեր ունեցող այլ աշխարհագրական շրջաններին: Կոնկրետ մարդու մոտ բուժման ակնկալվող հաջողությունը կախված է նրա մոտ ռեզիստենտ շտամի առկայության հավանականությունից, որն, ի վերջո, պայմանավորված է տվյալ պոպուլյացիայում ռեզիստենտ շտամների մակարդակով և նախկինում նրա ստացած հակաբիոտիկներով: Բուժման հասանելի տվյալների մեծ մասը, հետևաբար, պոպուլյացիոն առանձնահատուկ են և կիրառելի չեն ռեզիստենտության այլ աստիճանի պոպուլյացիաներում: Այսպիսով, նման տվյալները ենթակա չեն ընդհանրացման: Կլինիկական օգտակար տվյալներ կարող ենք ունենալ, եթե հայտնի են պոպուլյացիայում ռեզիստենտության աստիճանը և պացիենտի նախկինում ստացած հակաբիոտիկները: Այդ պնդումը կիրառելի է կլարիտորումիցինի, մետրոնիդազոլի և լևոֆլոքսացինի, բայց ոչ ամոքսիցիլինի և տետրացիկլինի համար:

Խորհուրդ 4

Կլարիտրոմիցինային ռեզիստենտության բարձր տարածաշրջաններում />15%/ խորհուրդ է տրվում կիրառել բիսմութային քառակի կամ ոչ բիսմութային քառակի՝ միաժամանակյա /ՊՊԻ, ամոքսիցիլին, կլարիտրոմիցին և նիտրոիմիդազոլ/ թերապիա:

Կլարիտրոմիցինային և մետրոնիդազոլային կրկնակի ռեզիստենտության բարձր տարածաշրջաններում որպես առաջին գծի թերապիա խորհուրդ է տրվում կիրառել բիսմութային քառակի թերապիա /ԲԲԹ/:

Ապացուցողական աստիճան՝ ցածր. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

Կլարիտրոմիցինային բարձր ռեզիստենտության տարածաշրջաններում բուժման ընտրությունը պետք է հիմնված լինի մետրոնիդազոլային և երկակի՝ կլարիտրոմիցինային և մետրոնիդազոլային ռեզիստենտության հաճախության վրա: Այն աշխարհագրական տարածաշրջաններում, որտեղ մետրոնիդազոլային ռեզիստենտությունը աննշան է /օրինակ, Ճապոնիա/, եռակի թերապիայում կլարիտրոմիցինի փոխարինումը մետրոնիդազոլով /ՊՊԻ, մետրոնիդազոլ, ամոքսիցիլին/ դեռևս ցուցաբերում է գերազանց բուժական արդյունք [167]:

Եթե մետրոնիդազոլի և կլարիտրոմիցինի նկատմամբ երկակի ռեզիստենտությունը >15% է, ապա այն կազդի բոլոր ոչ ԲԲԹ արդյունավետության վրա [168]: Երկակի ռեզիստենտության սպասելի աստիճանը՝ կախված յուրաքանչյուր հակաբիոտիկի անհատական ռեզիստենտությունից, ցույց է տրված առցանց լրացուցիչ աղյուսակում S3: Եթե մետրոնիդազոլի ռեզիստենտությունը մնում է կայուն մակարդակի վրա՝ 30-40%-ի միջև, ապա կլարիտրոմիցինի ռեզիստենտությունը պետք է լինի 50% և 40%, որպեսզի բացասաբար անդրադառնա միաժամանակյա բուժման արդյունավետության վրա:

Բարձր կլարիտրոմիցինային ռեզիստենտությամբ /15-40%/, բայց ցածր կամ միջին մետրոնիդազոլային ռեզիստենտության /<40%/ տարածաշրջաններում /բնորոշ է կենտրոնական և հարավային եվրոպական երկրների մեծ մասին և


ԱՄՆ-ին/ [164,169] 14-օրյա միաժամանակյա ոչ ԲՔԹ նշանակումը կարող է լինել արդյունավետ այլընտանք [170], քանի որ երկակի ռեզիստենտ շտամների մակարդակը միշտ կլինի <15%: Իսպանիայում [171-174], Հունաստանում [175,176] և Իտալիայում [174,177] վերջերս կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ միաժամանակյա բուժման դեպքում ստացվում է 85%-94% արդյունք: Եվրոպայում, չնայած մետրոնիդազոլային ռեզիստենտությանը, ԲՔԹ-ն ցուցաբերել է բարձր արդյունավետություն [143]:

Երկակի կլարիտրոմիցինային և մետրոնիդազոլային բարձր ռեզիստենտությամբ />15%/ տարածաշրջաններում բուժման ընտրության եղանակ է ԲՔԹ-ն: Իդեալական կլինի կլարիտրոմիցինից խուսափել և կիրառել այլընտրանքային հակաբիոտիկների զուգակցումներ, որոնց հանդեպ ռեզիստենտությունը պրոբլեմատիկ չէ /օրինակ, ամոքսիցիլին, տետրացիկլին, ֆլուրազոլիդոն, ռիֆաբուտին/ կամ այն կարելի է հաղթահարել՝ բարձրացնելով դեղաչափը, նշանակման միջակայքը և տևողությունը /օրինակ, մետրոնիդազոլ/: Չինաստանում /որտեղ H. Pylori ռեզիստենտությունը կլարիտրոմիցինի հանդեպ գնահատվում է 20-40%, մետրոնիդազոլի նկատմամբ՝ >60%/ [178] մետրոնիդազոլի, ֆտորիսինոլինների և կլարիտրոմիցինի նկատմամբ H. Pylori ռեզիստենտ շտամների դեմ հաջողությամբ փորձարկվել է ՊՊԻ-ից, բիսմութից և ամոքսիցիլինից, տետրացիկլինից, մետրոնիդազոլից կամ ֆլուրազոլիդոնից որևէ երկուսից բաղկացած թերապիան /բուժման արդյունավետությունը >90%/ [179]: Այդ սխեման ներկայումս առաջարկվում է որպես առաջին գծի թերապիա [178]:

Բարձր երկակի կլարիտրոմիցին և մետրոնիդազոլ ռեզիստենտ տարածաշրջաններում, եթե բիսմութը հասանելի չէ, ապա կարելի է կիրառել լևոֆլոքսացին [180], ռիֆաբուտին [181] և բարձր դեղաչափով ՊՊԻ + ամոքսիցիլին [182] սխեմաները: Այդպիսի տարածաշրջաններում, եթե տետրացիկլինը հասանելի չէ, ապա բիսմութ պարունակող ֆլուրազոլիդոն +մետրոնիդազոլ կամ ամոքսիցիլին + մետրոնիդազոլ քառակի սխեման կարող է լինել արդյունավետ [178,179]: Կարելի է կիրառել նաև բիսմութ + եռակի թերապիա /ՊՊԻ, ամոքսիցիլին և կլարիտրոմիցին կամ լևոֆլոքսացին/ [183,184]: Բարձր

կլարիտորմիցինային ռեզիստենտությամբ աշխարհագրական տարածաշրջաններում առաջարկվող թերապևտիկ ալգորիթմը ներկայացված է պատկեր 1-ում:

Պատկեր 1



*- անկախ պոպուլյացիոն ակնկալվող տվյալներից, նախկինում կլարիտրոմիցին և/կամ մետրոնիդազոլ ստացած անձիք պետք է համարվեն կրկնակի կայունության բարձր ռիսկով հիվանդներ

** - եթե բիսմութը հասանելի չէ, պետք է դիտարկել լևոֆլոքսացին, ռիֆաբուտին և բարձր դեղաչափով ՊՊԻ + ամոքսիցիլին սխեմաները: Եթե տետրացիկլինը հասանելի չէ, ապա կարելի է դիտարկել բիսմութ պարունակող քառակի սխեմաներ՝ ֆուրազոլիդոն + մետրոնիդազոլով կամ ամոքսիցիլին + մետրոնիդազոլով

Խորհուրդ 5

ԲԲԹ-ի տևողությունը պետք է երկարացվի մինչև 14 օր, եթե չկան տվյալներ, որոնք ապացուցում են 10-օրյա բուժման տեղային արդյունավետությունը:

Ապացուցողական աստիճան՝ շարքածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

H. Pylori էռադիկացիայի նպատակով բիսմութը սովորաբար կիրառվում է 7-14 օր: 4763 պացիենտներ ընդգրկող 35 հետազոտությունների մեթավերլուծությամբ ցույց է տրվել, որ H. Pylori էռադիկացիայի նպատակով առանձին կամ հակաբիոտիկների հետ միասին կիրառված բիսմութի աղերն անվնաս են և լավ են տարվում պացիենտի կողմից [185]: Fishbach et al [186] կատարել են մեթավերլուծություն՝ առաջին գծի ԲԲԹ-ի արդյունավետությունը, կողմնակի ազդեցությունները և տանելիությունը ուսումնասիրելու նպատակով: Պարզվել է, որ 1-3, 4 և 7 օր տևողությամբ ԲԲԹ-ն նվազ արդյունավետ է, քան 10-14 օր տևողությանը: 10-14 օր տևողությամբ ՊՊԻ, բիսմութի, մետրոնիդազոլի և տետրացիկլինի կիրառումով ստացվում է >85% էռադիկացիոն արդյունք՝ նույնիսկ մետրոնիդազոլի նկատմամբ բարձր ռեզիստենտության տարածաշրջաններում:

75 հետազոտություններ ընդգրկող Կոխսբեյն համակարգային վերլուծություն է կատարվել ուսումնասիրելու համար H. Pylori էռադիկացիայի օպտիմալ ռեժիմները [187]: Միայն 6 հետազոտություններում /n=1157/ էին կիրառվել ՊՊԻ + բիսմութ + երկու հակաբիոտիկներ: Հակաբիոտիկների համակցումները ներառում էին տետրացիկլին և մետրոնիդազոլ, ֆուրազոլիդոն և ամոքսիցիլին, և կլարիտրոմիցին և ամոքսիցիլին: Համեմատվել են 14 օրը ընդդեմ 7 օրվա, 10 օրը ընդդեմ 7 օրվա և 14 օրը ընդդեմ 10 օրվա էռադիկացիայի արդյունավետությունը: Համեմատություններից ոչ մեկով հնարավոր չեղավ եզրակացնել, որ տևողության երկարությունը հավաստիորեն բարձրացնում է ԲԲԹ-ի արդյունավետությունը: Սակայն պետք է նշել, որ հետազոտություններում հիվանդների քանակը փոքր էր: 14 և 10 օր տևողությամբ օրը 2 անգամ կիրառված ԲԲԹ-ի արդյունավետությունը և տանելիություն որոշած միակ լայն հետազոտությունը ցույց է տվել, որ H. Pylori էռադիկացիայի աստիճանի տարբերություն 14 օրվա /91.6% / և 10 օրվա /92.6%/ միջև վիճակագրորեն հավաստի չէ [188]: Մետրոնիդազոլի հանդեպ ռեզիստենտության տվյալները հասանելի չէին, բայց նախորդ հետազոտություններով պարզված էր, որ այդ տարածաշրջանում մետրոնիդազոլային ռեզիստենտությունը 29% էր [188], իսկ եվրոպական նախորդ բազմակենտրոն հետազոտությունում՝ 30% [164]:

Տարբեր տարածաշրջաններում վերջերս կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ 14-օրյա ԲՔԹ-ի արդյունավետությունը $\geq 85\%$ [189-191]: 10-օրյա տևողությամբ կիրառված բիսմութ, մետրոնիդազոլ, տետրացիկլին պարունակող դեղապատիճի + օմեպրազոլի համակցությունը փորձարկած 2 ռանդոմիզացված կլինիկական հետազոտությունները ցույց են տվել $\geq 90\%$ արդյունավետություն [143,192]: Հետագա հետազոտությունը հայտնում է 93% էռադիկացիոն աստիճանի մասին առաջին զժի անհաջող թերապիայից հետո կիրառելու դեպքում [193]:

Ներկայումս նվազագույնը 10 օրվա տևողության ԲՔԹ-ն համարվում է արդյունավետ՝ այն պայմանով, որ դեղաչափերը բավարար են: Մետրոնիդազոլի հանդեպ ռեզիստենտության բարձր հաճախությամբ տարածաշրջաններում ցանկալի է 14-օրյա տևողությունը [186,194]: Երկշաբաթյա մետրոնիդազոլի կիրառումը կարող է հաղթահարել մետրոնիդազոլի ռեզիստենտության բացասական ազդեցությունը [195]: Կորեական հետազոտությունը ևս վկայում է երկարատև կիրառման որոշ առավելությունների մասին [196-199]:

Խորհուրդ 6

Կլարիտրոմիցինային ռեզիստենտությունը նվազեցնում է եռակի և հաջորդական թերապիայի արդյունավետությունը, մետրոնիդազոլային ռեզիստենտությունը նվազեցնում է հաջորդական թերապիայի արդյունավետությունը և կլարիտրոմիցինային և մետրոնիդազոլային երկակի ռեզիստենտությունը նվազեցնում է միաժամանակյա, հիբրիդ և հաջորդական թերապիայի արդյունավետությունը:

Ապացուցողական աստիճան՝ միջին. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

Ներկայումս կլարիտրոմիցին պարունակող և ԲՔԹ բուժման արդյունքը կարելի է կանխատեսել՝ իմանալով կլարիտրոմիցինային և մետրոնիդազոլային ռեզիստենտության աստիճանը [168]: Համարվում է, որ բոլոր ոչ ԲՔԹ սխեմաները ազդում են ավելի լավ, քան եռյակ թերապիան, և ավելի արդյունավետ են

կլարիտրոմիցինային ռեզիստենտության նկատմամբ: Կլարիտրոմիցին ռեզիստենտ շտամների հանդեպ հաջորդական թերապիան ցուցաբերում է ավելի բարձր արդյունք, քան 7-10-օրյա եռյակ թերապիան, բայց առավել չէ 14-օրյա եռյակ թերապիայից [200,201]: Հարկ է նշել, որ հաջորդական թերապիան ցուցաբերում է ավելի ցածր արդյունավետություն կլարիտրոմիցին ռեզիստենտ շտամների դեմ՝ համեմատած հաջորդական թերապիայի հետ, ինչպես ցույց է տրված հանդիպակաժ հետազոտություններում և գրականության վերջին տվյալներով:

Մետրոնիդազոլային ռեզիստենտությունը հանդիսանում է հաջորդական թերապիայի արդյունավետության վրա ազդող մեկ այլ կարևորագույն գործոն: Ի տարբերություն կլարիտրոմիցինային ռեզիստենտության, մետրոնիդազոլային ռեզիստենտությունը կարելի է մասնակիորեն հաղթահարել, բարձրացնելով դեղաչափը, նշանակման հաճախությունն ու տևողությունը: Հաջորդական թերապիայում մետրոնիդազոլը նշանակվում է 5-7 օր, հիբրիդ թերապիայում՝ 7 օր, միաժամանակյա թերապիայում՝ 14 օր: Մետրոնիդազոլ ռեզիստենտ և կլարիտրոմիցին զգայուն շտամների բուժման դեպքում հաջորդական թերապիան ցուցաբերել է ավելի ցածր արդյունավետություն, քան միաժամանակյա թերապիան, ինչպես ցույց է տրված հանդիպակաժ հետազոտություններում և վերջին գրականական տվյալներով: 14- օրյա եռյակ թերապիայի նկատմամբ 14-օրյա հաջորդական թերապիայի առավելությունը գնահատելու համար Թայվանում կատարված աշխատանքում առաջարկվել է այդ 2 թերապիաների ելքի կանխորոշման մոդել: Այն ենթադրում է, որ հաջորդական թերապիան 14-օրյա եռյակ թերապիայից արդյունավետ է միայն այն դեպքում, երբ մետրոնիդազոլային ռեզիստենտությունը <40% [200]: Այս պնդումն ամբողջովին հաստատվել է հետագայում կատարված բազմաթիվ մեթա-վերլուծություններով [201-204], որոնցում ցույց է տրված, որ մետրոնիդազոլային /նաև երկակի/ բարձր կայունության տարածաշրջաններում հաջորդական թերապիան կորցնում է 14-օրյա եռյակ թերապիայի նկատմամբ առավելությունը [200]: Երկակի ռեզիստենտությունը բոլոր ոչ ԲՔԹ արդյունավետության վրա ազդող հիմնական

գործոնն է: Ենթադրվում է, որ հաջորդական, հիբրիդ և միաժամանակյա բուժման արդյունքը միշտ կլինի <90%-ց, երբ երկակի ռեզիստենտ շտամների մակարդակը համապատասխանաբար >5%, >9%, >15% է [168]: H. Pylori երկակի ռեզիստենտ շտամների դեպքում հաջորդական բուժման արդյունավետությունը զգալիորեն ցածր է միաժամանակյա բուժումից: Ինչ վերաբերում է հիբրիդ թերապիային, ապա ներկայումս առկա են քիչ քանակությամբ պացիենտների թվով երկու կլինիկական հետազոտությունների տվյալներ [174,205], որոնք վկայում են, որ բուժումն արդյունավետ է կլարիտրոմիցին զգայուն և մետրոնիդազոլ ռեզիստենտ շտամների նկատմամբ /47/48 - 97%/ և նվազ արդյունավետ է երկակի ռեզիստենտ շտամների նկատմամբ / 2/4 - 50%/ [201]:

Խորհուրդ 7

Ներկայումս միաժամանակյա թերապիան /ՊՊԻ, ամոքսիցիլին, կլարիտրոմիցին և նիտրոմիդազոլ/ համարվում է նախընտրելի ոչ ԲՔԹ, քանի որ այդ դեպքում հակաբիոտիկային ռեզիստենտությունը հաղթահարվում է ամենաարդյունավետ կերպով:

Ապացուցողական աստիճան՝ միջին. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

Բոլոր ոչ ԲՔԹ-ները /միաժամանակյա, հիբրիդ, եռյակ և հաջորդական/ զերազանց բուժական արդյունք են դրսևորում H. Pylori հակաբիոտիկների հանդեպ զգայուն շտամների նկատմամբ, բայց ռեզիստենտության տարբեր աստիճանի պոպուլյացիաներում արդյունքը կարող է տարբեր լինել [168]: 3 մեթավերլուծությունները ցույց են տվել, որ հաջորդական և միաժամանակյա թերապան ունեն միանման արդյունավետություն [201,206,207], ինչպես նաև մեկ այլը՝ ենթադրել, որ հիբրիդ թերապիան նվազ արդյունք չի ցուցաբերում [208]: Այս մեթավերլուծությունների տվյալները պետք է դիտարկել մեթոդոլոգիական առանձնահատկությունները հաշվի առնելով: Առաջին մեթավերլուծությունում ներառնված 6 հետազոտություններից 2-ում /33%/ համեմատվել են 5-օրյա միաժամանակյա և 10-օրյա հաջորդական թերապիաները, մինչդեռ երկու եղանակով էլ 14-օրյա տևողությամբ թերապիաները դուրս են մնացել

հետազոտությունից [201]: Երկրորդ մեթա-վերլուծության մեջ 8-ից 3-ում /37%/ 5-օրյա միաժամանակյա թերապիան համեմատվել է 10-օրյա հաջորդական թերապիայի հետ: Երրորդ վերլուծության դեպքում միաժամանակյա բուժման տևողությունը եղել է 5, 7, 10 և 14 օր, իսկ հաջորդական թերապիայի դեպքում՝ 10 և 14 օր [207]: Պետք է նշել, որ ամենամեծ ընտրանքի չափով /n=975/ հետազոտությունը, որն ընդգրկվել էր բոլոր 3 մեթա-վերլուծություններում, համեմատել էր 5-օրյա միաժամանակյա թերապիան 10-օրյա հաջորդականի հետ՝ Լատինական Ամերիկայում, որտեղ կլարիտրոմիցինի և մետրոնիդազոլի հանդեպ կայունությունը բարձր է [209]: Ավելին, մեթա-վերլուծությունները մշտապես ցույց են տվել, որ միաժամանակյա բուժման արդյունավետությունը կախված է տևողությունից [210,211]: Բուժման նույն ժամկետների դեպքում միաժամանակյա թերապիայի արդյունավետությունը բարձր է հաջորդական բուժման արդյունավետությունից:

Հաջորդական թերապիան բարդ է իրականացնել և դրա ընթացքում հարկ է փոխել հակաբիոտիկը, ինչը կարող է շփոթեցնել պացիենտին: Հաջորդական թերապիան ավելի հասկանալի է պացիենտի համար և նրան ավելի հեշտ է այն կատարել, իսկ տանելիությունը նույնն է, ինչ ստանդարտ եռյակ թերապիայի դեպքում:

Հիբրիդային թերապիայի վերաբերյալ տվյալները քիչ են: Լավ արդյունքներ են ստացվել Իսպանիայում, Իրանում և Թայվանում [171,174,205,212,213], սակայն անբավարար արդյունքներ՝ Իտալիայում և Կորեայում [177,214-216], հավանաբար, ռեզիստենտության տարածվածության աշխարհագրական տարբերությունների պատճառով:

Խորհուրդ 8

Ոչ ԲՔԹ -ի/միաժամանակյա թերապիայի/ առաջարկվող տևողությունը 14 օր է, եթե չի ապացուցվել 10-օրյա թերապիայի տեղային արդյունավետությունը:

Ապացուցողական աստիճան՝ շատ ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Եվրոպայում և Ճապոնիայում նախկինում կատարված հետազոտություններով ենթադրվել էր, որ 3-5 օրյա կարճ տևողությամբ բուժումը ՊՊԻ-ով և 3 հակաբիոտիկներով կարող է հանգեցնել բավարար բուժական արդյունքի [217]: 9 հետազոտություն ընդգրկած առաջին մեթա-վերլուծությունը վկայել է, որ որոշ դեպքերում շատ կարճ բուժման տևողությամբ հնարավոր է ստանալ գերազանց արդյունք, սակայն բուժման տևողությունը գնալով դառնում է նկատելի փոփոխական:

Gisbert և McNichol 55 հետազոտություն /n=6906/ ընդգրկող մեթա-վերլուծությամբ չեն գտել հստակ ապացույց, որ ավելի երկար բուժումը տալիս է ավելի բարձր էռադիկացիայի արդյունք: Սակայն բազմաթիվ Ռ-ՎՓ նույն ընթացակարգով համեմատել են միաժամանակյա բուժման տարբեր տևողությունները և ցույց են տվել, որ երկարատև թերապիան ավելի արդյունավետ է [215,218-220]: Ավելին՝ 5-օրյա բուժման դեպքում սուբօպտիմալ արդյունքներ են ստացվել Լատինական Ամերիկայում /73.5%/ [209] և Հարավային Կորեայում /58.6%/ [221], բայց նաև 14-օրյա թերապիայի դեպքում նման տվյալներ են ստացվել Թուրքիայում /75%/ [222] և Հարավային Կորեայում /80.8%/ [223]: Այսպիսի ցածր տվյալները վերագրվել են այդ շրջաններում կլարիտրոմիցինային և հատկապես մետրոնիդազոլային բարձր ռեզիստենտությանը [168,170]: Վերջերս կատարված հետազոտություններում համեմատվել են ստանդարտ և այսպես կոչված օպտիմիզացված /էզոմեպրազոլի բարձր դեղաչափ՝40 մգ օրը 2 անգամ և 14-օրյա տևողություն/ միաժամանակյա թերապիայի արդյունավետությունն ու տանելիությունը: Օպտիմիզացված ռեժիմը եղել է ավելի արդյունավետ /91% ընդդեմ 86%/ [224]: Չնայած կողմնակի ազդեցություններն ավելի շատ են ի հայտ եկել օպտիմիզացված բուժման ժամանակ, դրանք առավելապես եղել են թույլ արտահայտված և բացասաբար չեն ազդել կոմպլայենսի վրա:

Մեկ այլ բազմակենտրոն՝ OPTRICON հետազոտությունում [172] հեղինակները համեմատել են 14-օրյա տևողությամբ երկու օպտիմիզացված եռյակ և միաժամանակյա թերապիաների արդյունավետությունը և անվտանգությունը /կիրառվել է 40մգ էզոմեպրազոլ օրը 2 անգամ/: Օպտիմիզացված միաժամանակյա բուժմամբ ստացվել է հավաստի բարձր էռադիկացիոն աստիճան: Կողմնակի ազդեցությունները հավաստիորեն ավելի հաճախ էին միաժամանակյա բուժման դեպքում, բայց ամբողջական կոմպլայենսը երկու խմբերում էլ միանման էր:

Խորհուրդ 9

Ցածր կլարիտրոմիցինային ռեզիստենտության տարածաշրջաններում եռյակ թերապիան առաջարկվում է որպես առաջին գծի էմպիրիկ բուժում: ԲՔԹ-ն հանդիսանում է այլընտրանք:

Ապացուցողական աստիճան՝ բարձր . Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

Այդ շրջաններում ստանդարտ ՊՊԻ-կլարիտրոմիցին պարունակող սխեման դեռևս առաջարկվում է որպես առաջին գծի բուժում: ԲՔԹ-ն համարվում է առաջին գծի այլընտրանք:

Խորհուրդ 10

Օրական երկու անգամ բարձր դեղաչափով նշանակված ՊՊԻ-ն բարձրացնում է եռյակ թերապիայի արդյունավետությունը: Էզոմեպրազոլն ու ռաբեպրազոլը կարող են նախընտրելի լինել Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում, որտեղ ՊՊԻ արագ մետաբոլիզացնողների քանակը շատ է:

Ապացուցողական աստիճան՝ ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Ամենայն հավանականությամբ, ստամոքսի ցածր թթվայնության դեպքում /pH 3-6/ H. Pylori-ն գտնվում է ոչ ռեպլիկատիվ վիճակում: pH բարձրացման դեպքում բակտերիան անցնում է ռեպլիկատիվ փուլի և ընկալունակ է դառնում ամոքսիցիլինի և կլարիտրոմիցինի նկատմամբ [225]: ՊՊԻ դերը հաստատվել է

բազմաթիվ մեթա-վերլուծությունների տվյալներով, որոնցում կլարիտրոմիցին և ամոքսիցիլին կամ մետրոնիդազոլ պարունակող եռյակ սխեմաներում ՊՊԻ օրական երկու անգամ դեղաչափով կիրառումը հավաստիորեն բարձրացնում է բուժման արդյունավետությունը՝ համեմատած օրական մեկ անգամ դեղաչափի հետ [226-228]:

ՊՊԻ նկատմամբ պատասխանը խստորեն որոշվում է դեղը մետաբոլիզացնելու պացիենտի ունակությամբ, ինչն էլ պայմանավորված է ցիտոքրոմ 2C19-ի և MDR-ի պոլիմորֆիզմներով: Այդ պոլիմորֆիզմները կարող են ազդել բուժման արդյունավետության վրա: ՊՊԻ բարձր դեղաչափերը, որոնք համապատասխան կերպով հսկողության տակ են պահում ստամոքսահյութի pH մակարդակը, կարող են որոշիչ լինել արագ մետաբոլիզացնողների մոտ էռադիկացիայի համար: Կովկասյան սուբյեկտների մոտ արագ մետաբոլիզացնողների տեսակարար կշիռը ավելի բարձր է /56-81%, քան ասիական, մասնավորապես՝ ճապոնական, ազգաբնակչության մոտ [170,229-233]: Որոշ հետազոտություններում ցույց է տրվել, որ օմեպրազոլ և լանզոպրազոլ պարունակող եռյակ թերապիայի արդյունավետությունը կախված է CYP2C19 պոլիմորֆիզմից, մինչդեռ ռաբեպրազոլ և էզոմեպրազոլ պարունակող ռեժիմներում կախվածություն չկա: Ենթադրվում է, որ ռաբեպրազոլն ամենաքիչն է կախված CYP2C19 պոլիմորֆիզմից, քանի որ առավելապես մետաբոլիզացվում է ոչ ֆերմենտատիվ եղանակով: Էզոմեպրազոլն ու ռաբեպրազոլը հանգեցնում են ավելի լավ էռադիկացիայի աստիճանի, հատկապես էզոմեպրազոլը 40 մգ օրը 2 անգամ, մինչդեռ 10 կամ 20 մգ ռաբեպրազոլը, օրը 2 անգամ, ցուցաբերում է առաջին սերնդի ՊՊԻ-երի հետ համադրելի արդյունք [234-239]:

Խորհուրդ 11

ՊՊԻ-կլարիտրոմիցինի վրա հիմնված թերապիայի տևողությունը պետք է լինի 14 օր, եթե չի ապացուցվել ավելի կարճ թերապիայի տեղային արդյունավետությունը:

Ապացուցողական աստիճան՝ միջին. Խորհրդի մակարդակը՝ խիստ

Ներկայումս հրապարակվել են նույնանման արդյունքներով մի քանի մեթավերլուծություններ [187,240-242], որտեղ ցույց է տրված, որ 14-օրյա եռյակ թերապիան բարձրացնում է էռադիկացիյի արդյունավետությունը՝ համեմատած 7 օրվա հետ: 10-օրյա թերապիան ևս առավել է 7-օրյայի նկատմամբ: Բոլոր մեթահետազոտություններում 14-օրյա ռեժիմն արդյունավետ էր 10-օրյայի նկատմամբ, մինչդեռ կողմնակի ազդեցությունների առումով տարբերություն չկար: Ի վերջո, նշանակման օրերի քանակը կախված է յուրաքանչյուր տարածաշրջանում բժշկի որոշումից, որը պետք է հաշվի առնի տեղային արդյունավետությունը, կողմնակի ազդեցությունների տանելիությունը և բուժման արժեքը: Կլարիտրոմիցինի երկարատև օգտագործման դեպքում պետք է հաշվի առնել սիրտանոթային համակարգի վրա ազդեցությունը [243]: Ընդհանրապես, թերապիայի կարճ տևողությունը կարելի է կիրառել միայն այն շրջաններում, որտեղ այն ցուցադրել է նույնքան բարձր արդյունավետություն, ինչքան երկար տևողությունը [244]:

Խորհուրդ 12

ԲԲԹ-ի անհաջողությունից հետո կարելի է առաջարկել ֆտորքինոլոն պարունակող եռակի կամ քառակի սխեմաներ: Քինոլոնների նկատմամբ բարձր ռեզիստենտության դեպքում կարելի է կիրառել բիսմուֆի համակցությունն այլ հակաբիոտիկների հետ կամ ռիֆաբուտին:

Ապացուցողական աստիճան՝ շատ ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Տեսականորեն, ԲԲԹ-ի անհաջողությունից հետո կարող է կիրառվել ցանկացած սխեմա, ներառյալ նույն ԲԲԹ սխեման՝ ավելի երկար տևողությամբ ու մետրոնիդազոլի ավելի բարձր դեղաչափով: Այնուամենայնիվ, ավելի խելամիտ կլինի երբեք չկիրառել նույն՝ անհաջողության մատնված բուժման սխեման: Երկու

անգամ անհաջողության մատնված բուժման դեպքում, որոնցից երկրորդում կիրառվել է ԲՔԹ, երրորդ գծի՝ ՊՊԻ ամոքսիցիլին և լևոֆլոքսացին պարունակող թերապիաի արդյունավետության գնահատման հետազոտությունների տվյալները ներկայացված են առցանց Աղյուսակ S11-ում [245-248]: Կորեայում ԲՔԹ-ի անհաջողությունից հետո մոքսիֆլոքսացինով եռյակ թերապիան 28 պացիենտներից 67%-ի մոտ եղել է արդյունավետ [249]: Չինական հետազոտությունում, որպես առաջին գծի թերապիա կատարված, բիսմութային բուժումն արդյունավետ է եղել 99% դեպքերում, իսկ անհաջողության մատնված երկու պացիենտների մոտ էլ հաջորդական թերապիան է եղել արդյունավետ [250]: ԲՔԹ անհաջողությունից հետո որպես երկրորդ գծի թերապիա ցանկալի չէ կիրառել կլարիտրոմիցին պարունակող բուժումը, քանի որ բիսմութային թերապիան առաջարկվում է որպես առաջին գծի բուժում՝ կլարիտրոմիցինային բարձր ռեզիստենտության տարածաշրջաններում: Հայտնի է, որ լևոֆլոքսացին հիմնված թերապիան արդյունավետ է կլարիտրոմիցինային թերապիայի անհաջողությունից հետո [251,252], և այս սխեման պետք է նաև առաջարկել՝ բիսմութ պարունակող քառակի թերապիայի անհաջողությունից հետո:

Խորհուրդ 13

ՊՊԻ-ամոքսիցիլին-կլարիտրոմիցին եռյակ թերապիայի անհաջողությունից հետո, որպես երկրորդ գծի թերապիա առաջարկվում է ԲՔԹ-ն կամ ֆտորքինոլոն պարունակող եռյակ կամ քառյակ թերապիան:

Ապացուցողական աստիճան՝ ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Եռյակ թերապիայի անհաջողությունից հետո պետք է ենթադրել առաջնային կամ ձեռք բերված կլարիտրոմիցինային ռեզիստենտության առկայությունը, հետևաբար, նույն ռեժիմի կիրառումն անհրաժեշտ է բացառել: Իսկապես, ութ հետազոտությունների վերլուծությամբ հայտնաբերվել է շատ ցածր էռադիկացիոն աստիճան /46%/, երբ կրկնվել է կլարիտրոմիցին հիմնված

թերապիան [253]: Այդ դեպքում Մասստրիխտ 4-ը առաջարկում էր կիրառել կամ ԲԲԹ, կամ լնֆլոքսացին հիմնված եռյակ թերապիա, հիմնվելով նախորդ մեթավերլուծություններում այդ երկու սխեմաների ցուցաբերած հավասար արդյունավետության վրա [251,252,254]: Վերջերս կատարված մեթավերլուծությամբ այդ տեսակետը սատարվում է [253]: Ավելին՝ առաջին գծի եռյակ թերապիայի անհաջողությունից հետո լնֆլոքսացին-ամոքսիցիլին-ՊՊԻ եռյակ թերապիան և ԲԲԹ-ն ցուցաբերել են միանման արդյունավետություն՝ համապատասխանաբար 76% և 78%: Սակայն կողմնակի ազդեցությունների հաճախականությունը պակաս էր լնֆլոքսացինային սխեմայի դեպքում [255]: Ենթախմբերի վերլուծությունը ցույց է տվել, որ օրական 500 մգ /կամ օրը 1 անգամ, կամ 250 մգ օրը 2 անգամ/ և 1000 մգ /500 մգ օրը 2 անգամ/ լնֆլոքսացինի դեպքում էռադիկացիայի աստիճանը նույնն է, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ցածր դեղաչափը գերադասելի է [255]: Սակայն վերջերս արձանագրվում է լնֆլոքսացին ռեզիստենտ շտամների տեսակարար կշռի աճ, և դա կարող է ազդել լնֆլոքսացինային սխեմաների արդյունավետության վրա [256]: Այսիպիսով՝ ԲԲԹ-ն շարունակում է հանդիսանալ երկրորդ գծի վավեր էռադիկացիոն թերապիա, հատկապես ֆտորքինոլոնների նկատմամբ բարձր ռեզիստենտության տարածաշրջաններում: Որպես երկրորդ շարքի բուժում, 14-օրյա ԲԲԹ-ն ավելի արդյունավետ է, քան 7-օրյա թերապիան [257]:

Վերջին շրջանում ստացված տվյալները ենթադրում են, որ եռյակ թերապիայի անհաջողության դեպքում 14 օր տևողությամբ բիսմութ և լնֆլոքսացին կոմբինացված թերապիան հանդիսանում է արդյունավետ $\geq 90\%$, պարզ և անվտանգ երկրորդ շարքի սխեմա [258]:

ՊՊԻ-ամոքսիցիլին-մետրոնիդազոլ սխեմաները ցուցաբերել են 87% էռադիկացիայի աստիճան: Ավելին, այդ հետազոտություններում ընդգրկված են եղել այն դեպքերը, երբ այդ սխեման նշասկվել է օրը 3 անգամ կիրառման ձևով, ինչը կարող է բացատրել բուժման այդպիսի բարձր արդյունքը, նույնիսկ կարճատև ռեժիմների դեպքում [253]: Սակայն դեռևս չկան այդ ռեժիմը ԲԲԹ-ի հետ համեմատող հետազոտություններ, և կան միայն երկու փոքր

հետազոտություններ, որտեղ այդ սխեման համեմատվել է ՊՊԻ-լնֆլոքսացին-ամոքսիցիլին եռյակ սխեմաների հետ [259,260]:

Խորհուրդ 14

Ոչ ԲՔԹ-ի անհաջողությունից հետո առաջարկվում է կիրառել կամ ԲՔԹ, կամ լնֆլոքսացին պարունակող եռյակ կամ քառյակ թերապիա:

Ապացուցողական աստիճան՝ շարժածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Ոչ ԲՔԹ-ի անարդյունավետությունից հետո արդյունավետ երկրորդ գծի բուժում առաջարկելու համար կատարվել է համակարգային ակնարկ և մեթավերլուծություն: Ընտրվել են 16 հետազոտություններ. 7-ում բուժման են ենթարկվել պացիենտներ՝ միաժամանակյա թերապիայի անհաջողությունից հետո, 15-ում՝ հաջորդականի անհաջողությունից հետո, և մեկում՝ հիբրիդ թերապիայի անհաջողությունից հետո: Հետազոտությունների մեծ մասն այդ դեպքերում ապացուցում են լնֆլոքսացինային եռյակ թերապիայի արդյունավետությունը /78%՝ 201 պացիենտների մոտ/ [176,177,261-264]: Այդ եռյակ թերապիան համանման արդյունավետ էր և՛ հաջորդական /81%/ , և՛ միաժամանակյա բուժման /78%/ անարդյունավետությունից հետո: Միայն մեկ հետազոտությունում է դիտարկվել հիբրիդ թերապիայի անհաջողությունից հետո լնֆլոքսացինային թերապիայով արդյունավետությունը, և այն կազմել է 50%: Այս բուժման տոլերանտությունն ընդունելի է. 4 հիվանդներ դադարեցրել են բուժումը՝ կողմնակի ազդեցությունների պատճառով:

Որոշ հետազոտողներ նախորդ ոչ ԲՔԹ-ի անարդյունավետության դեպքում կիրառված սխեմայում լնֆլոքսացինի փոխարեն օգտագործել են մոքսիֆլոքսացին և ստացել են 71% արդյունավետություն [249,265,266]: Այս տվյալները պետք է մեկնաբանվեն զգուշորեն՝ հետազոտությունների բնութագրի և տվյալների հետերոգենության տեսանկյունից:

Լնֆլոքսացինի վրա հիմնված հիմնված թերապիայի կարևոր թերություն է, որ այն նվազ արդյունավետ է լնֆլոքսացինի նկատմամբ բարձր

նեզիստենտության տարածաշրջաններում [267,268]: Բիսմութը հակաբիոտիկների հետ ունի սիներգիկ ազդեցություն և հաղթահարում է կլարիտրոմիցինային և լևոֆլոքսացինային նեզիստենտությունը [269,270]: Բիսմութի ավելացմամբ քառյակ սխեմաները /ՊՊի, բիսմութ, ամոքսիցիլին, լևոֆլոքսացին/ ցուցաբերել են հուսադրող արդյունքներ [270-273]: Պատահական կերպով բաշխված /ռանդոմիզացված/ պացիենտների մոտ, ովքեր 14 օր ստացել են ՊՊի, ամոքսիցիլին, լևոֆլոքսացին բիսմութով կամ առանց բիսմութի, էռադիկացիայի աստիճանը թեթևակիորեն բարձր է եղել բիսմութ ստացողների խմբում /87% և 83%/, բայց լևոֆլոքսացին նեզիստենտ շտամների դեպքում բիսմութի խմբում էռադիկացիայի աստիճանը դեռևս համեմատաբար ավելի բարձր էր /71% և ընդամենը 37%/ [270]: Անհաջող էռադիկացիայից հետո, երբ որպես երկրորդ գծի թերապիա 14 օր կիրառվել է էզոմեպրազոլ, բիսմութ, ամոքսիցիլին և լևոֆլոքսացին, ստացվել են բուժման նմանատիպ արդյունքներ [258]: Այսպիսով, լևոֆլոքսացին/բիսմութ պարունակող քառակի սխեման համարվում է հուսադրող երկրորդ գծի թերապիա՝ ոչ միայն նախորդիվ անհաջողության մատնված եռյակ թերապիայից, այլ նաև ոչ բիսմութային քառակի՝ հաջորդական կամ միաժամանակյա անհաջող թերապիայից հետո: Ոչ ԲՔԹ-ի անհաջողությունից հետո դասական ԲՔԹ-ն ևս արդյունավետ է: Բուժման այլ տարբերակների վերաբերյալ կուտակված փորձը շատ փոքր է [200,274,275]:

Խորհուրդ 15

Երկրորդ գծի թերապիայի անհաջողությունից հետո բուժման արդյունավետությունն ուղղորդելու համար խորհուրդ է տրվում կատարել ցանքս՝ հակաբիոտիկների հանդեպ զգայունության որոշումով, կամ էլ զենոտիպային կայունության մոլեկուլային որոշում:

Ապացուցողական աստիճան՝ շար ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Երկրորդ գծի թերապիայի անհաջողության դեպքում, եթե հնարավոր է, պետք է իրականացնել ՀՄՁԹ: Եռյակ թերապիայի արդյունավետության վրա մեծ բացասական ազդեցություն ունի կլարիտրոմիցինի, լևոֆլոքսացինի և

ռիֆաբուտինի նկատմամբ ռեզիստենտությունը: Մետրոնիդազոլի նկատմամբ ռեզիստենտությունն ունի ավելի քիչ նշանակալի բացասական ազդեցություն: Զգայնությամբ առաջնորդվող առաջին գծի եռյակ թերապիան առավել արդյունավետ է, քան էմպիրիկ եռյակ թերապիան [139,276]: Համակարգային վերլուծությամբ պարզվել է, որ երկրորդ գծի թերապիայի պարագայում անհատականացված բուժման առավելությունն անորոշ է, իսկ երրորդ գծի թերապիայի համար չկան համեմատական տվյալներ: Այս հետազոտությունների մեծ մասում որոշվել է միայն կլարիտրոմիցինային զգայնությունը:

Չկան էմպիրիկ և զգայնության վրա հիմնված հաջորդական թերապիաների համեմատական տվյալներ: Սակայն հրապարակվել են տվյալներ գենոտիպային կայունության վրա հիմնված հաջորդական թերապիայի օպտիմալ արդյունավետության մասին՝ որպես ռեֆրակտեր *H. Pylori* վարակի երրորդ շարքի թերապիայի [277]:

Ոչ ԲՔԹ-ն զգալի ազդեցություն ունի երկակի ռեզիստենտության վրա [176]: Բարձր կլարիտրոմիցինային ռեզիստենտության տարածաշրջաններում զգայունությամբ ուղղորդված եռյակ թերապիան ավելի լավ արդյունք է ցույց տվել, քան էմպիրիկ միաժամանակյա թերապիան [278]: ԲՔԹ-ն ամենաքիչն է կախված հակաբիոտիկային ռեզիստենտությունից: Տետրացիկլինային ռեզիստենտությունը շատ հազվադեպ է հանդիպում և չի սպասվում, որ կզարգանա՝ չնայած բուժման անհաջողությանը: Մետրոնիդազոլային ռեզիստենտությունը չի նվազեցնում էռադիկացիայի աստիճանը [143,192,279]:

խորհուրդ 16

Առաջին շարքի /կլարիտրոմիցինի վրա հիմնված/ և երկրորդ շարքի /ԲՔԹ/ անհաջողությունից հետո խորհուրդ է տրվում կիրառել ֆտորքինոլոն պարունակող սխեմաներ: Ֆտորքինոլոնների նկատմամբ բարձր ռեզիստենտության տարածաշրջաններում խորհուրդ է տրվում կիրառել բիսմութի համակցությունը տարբեր հակաբիոտիկների կամ ռիֆաբուտինի հետ:

Ապացուցողական աստիճան՝ շարժածր. Խորհրդի մակարդակը՝ ցածր

Այս սցենարը արտացոլում է Մասստրիխտ 4-ում առաջարկված մոտեցումներն առաջին և երկրորդ գծերի թերապիայի վերաբերյալ: Մեկ հետազոտություն փորձարկել էր այդ մոտեցումը և որպես երրորդ գծի թերապիա օգտագործվել է լևոֆլոքսացին հիմնված բուժումը: Դա հանգեցրել է H. Pylori էռադիկացիայի բարձր կունույատիվ աստիճանի [247]: Տարբեր հետազոտություններով ապացուցվել է, որ առաջին և երկրորդ գծերի անհաջողության դեպքում ՊՊԻ, ամոքսիցիլին, լևոֆլոքսացին համակցությունը ունի բարձր թերապևտիկ արդյունավետություն [245,247,251,252]: Սակայն լևոֆլոքսացինի նկատմամբ ռեզիստենտության բարձրացմամբ պայմանավորված՝ պետք է հաշվի առնվի ռեզիստենտ շտամների բաղադրամասը [280]: Ֆտորքինոլինների նկատմամբ բարձր ռեզիստենտության տարածաշրջաններում ռիֆաբուտին պարունակող սխեմաները հավանաբար հանդիսանում են ավելի լավ թերապևտիկ տարբերակ [281]:

Խորհուրդ 17

Առաջին գծի /եռակի կամ ոչ ԲՔԹ/ և երկրորդ գծի /լևոֆլոքսացին պարունակող/ թերապիայի անհաջողության դեպքում խորհուրդ է տրվում կիրառել ԲՔԹ:

Ապացուցողական աստիճան՝ շարժածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Նախկինում անհաջող բուժված պացիենտների մոտ ԲՔԹ-ն դրսևորում է էռադիկացիայի բարձր աստիճան և հանդիսանում է “փրկության” թերապիայի համար արդյունավետ տարբերակ [143,193,282,283]: Ավելին՝ ԲՔԹ-ի արդյունավետության վրա չի ազդում կլարիտրոմիցինային և լևոֆլոքսացինային ռեզիստենտությունը [284]:

Խորհուրդ 18

Առաջին գծի ԲՔԹ և երկրորդ գծի լնֆլորբսացին պարունակող բուժման անարդյունավետության դեպքում խորհուրդ է տրվում կիրառել կլարիտրոմիցին հիմնված եռակի կամ քառակի թերապիա: Մեկ այլ մոտեցում կարող է լինել բիսմութի համակցությունը տարբեր հակաբիոտիկների հետ:

Ապացուցողական աստիճան՝ շարք ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Այդ սցենարի դեպքում նախկինում չպետք է կիրառված լինի կլարիտրոմիցին: Հետևաբար, կլարիտրոմիցինի վրա հիմնված եռակի թերապիան /կլարիտրոմիցինի նկատմամբ ցածր ռեզիստենտության տարածաշրջաններում/ կամ ոչ ԲՔԹ-ն / կլարիտրոմիցինային բարձր ռեզիստենտության տարածաշրջաններում/ արդյունավետ մոտեցումներ են: Մեկ այլ մոտեցում է՝ բիսմութ + նախկինում չօգտագործված երկու հակաբիոտիկներ [191]:

Խորհուրդ 19

Ցածր կլարիտրոմիցինային ռեզիստենտությամբ տարածաշրջաններում պենիցիլինի հանդեպ ալերգիա ունեցող պացիենտներին կարելի է նշանակել ՊՊի-կլարիտրոմիցին-մետրոնիդազոլ համակցություն: Բարձր կլարիտրոմիցինային ռեզիստենտությամբ տարածաշրջաններում նախընտրելի է ԲՔԹ-ն:

Ապացուցողական աստիճան՝ շարք ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Պացիենտների միայն մի փոքր տոկոսը, որոնք նշում են ալերգիա պենիցիլինի նկատմամբ, ունեն իմուն միջնորդավորված գերզգայնության ապացույցներ: Ալերգիայի հանդեպ բացասական թեստերը թույլ են տալիս օգտագործել պենիցիլինը որպես առաջին շարքի բուժում՝ անհրաժեշտության

դեպքում, որպեսզի այսպիսի հիվանդները չզրկվեն լավագույն թերապիայի հնարավորությունից [285-288]: Անոքսիցիլինի փոխարինումը մետրոնիդազոլով արդյունավետ տարբերակ չէ՝ երկակի կայունության պատճառով [289,290]:

Պենիցիլինի նկատմամբ ապացուցված ալերգիա ունեցող պացիենտների մոտ արդյունավետ է եղել 10 օրյա տևողությամբ ՊՊԻ-տետրացիկլին-մետրոնիդազոլ սխեման [291,292]: Այս սխեման ավելի արդյունավետ է բիսմութի ավելացման դեպքում և կարող է պենիցիլինի նկատմամբ ալերգիայի դեպքում լինել առաջին գծի թերապիայի այլընտրանք /հատկապես մետրոնիդազոլի և/կամ կլարիտրոմիցինի նկատմամբ բարձր ռեզիստենտության տարածաշրջաններում/ [293]: Նախկինում ՊՊԻ, մետրոնիդազոլ, կլարիտրոմիցին ստացած և անհաջողության մատնված դեպքերում դասական ԲԲԹ-ն կամ մոդիֆիկացված քառակի բիսմութային սխեմաները /ՊՊԻ-տետրացիկլին-ֆուրազոլիդոն-բիսմութ/ կարող են լինել շատ արդյունավետ [193,294]:

Խորհուրդ 20

Փրկության ռեժիմ. Պենիցիլինային ալերգիայի դեպքում ֆտորքինոլոնային սխեման կարող է լինել երկրորդ գծի փրկության էմպիրիկ տարբերակ:

Ապացուցողական աստիճան՝ շարժ. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Տարբեր համակցություններով ֆտորքինոլոնային ռեժիմներն արդյունավետ են [242,293], սակայն քինոլոնների նկատմամբ շատ հեշտ է առաջանում ռեզիստենտություն և այն երկրներում, որտեղ քինոլոնները լայնորեն են կիրառվում, ռեզիստենտության աստիճանը հարաբերականորեն բարձր է [294]: Ճապոնիայում հաջողությամբ կիրառվել է սիտաֆլոքսացին հիմնված ռեժիմը [295,296]:

Կանխարգելում / հանրային առողջություն

Խորհուրդ 1

H. Pylori-ն համարվում է ստամոքսի քաղցկեղի գլխավոր էթիոլոգիական գործոն:

Ապացուցողական աստիճան՝ 1a. Խորհրդի մակարդակը՝ A

Այս պնդումը ներկայումս առանց կասկածի հաստատված է տարբեր ապացույցներով՝ ներառյալ համաճարակաբանական, մոլեկուլային հետազոտությունները, կենդանիների վրա աշխատանքները և մարդկանց մոտ էռադիկացիոն հետազոտությունները, որոնք ցույց են տվել, որ էռադիկացիոն բուժում ստացածների մոտ նվազած է ստամոքսի քաղցկեղով հիվանդացածությունը: Չնայած նրան, որ Էպշտեյն-Բարի վիրուսը և այլ հազվադեպ պատճառներ /այդ թվում ժառանգական/ կարող են առաջացնել քաղցկեղ՝ համաշխարհային դեպքերի փոքր տոկոսում, ընդունված է, որ առնվազն 90% դեպքերում ստամոքսի քաղցկեղը պայմանավորված է H. Pylori-ով: Դա վերաբերում է քաղցկեղի և՛ դիֆուզ, և՛ ինտեստինալ տիպերին [297-302]:

Խորհուրդ 2

H. Pylori վարակը հանդիսանում է նաև ստամոքսի պրոքսիմալ քաղցկեղի /ՍՊՔ/ ռիսկի գործոն, եթե էզոֆագեալ և անցողիկ հատվածի ադենոկարցինոման համապատասխան կերպով բացառվել է:

Ապացուցողական աստիճան՝ 2c. Խորհրդի մակարդակը՝ B

Սկզբնական շրջանի համաճարակաբանական աշխատանքներում, որոնք գնահատել են H. Pylori ռիսկը ստամոքսի քաղցկեղի առաջացման ախտընթացում, հիմնական ուշադրությունը դարձվել է դիստալ ստամոքսային քաղցկեղին /ոչ կարդիալ ստամոքսի քաղցկեղ, ՈԿՍՔ/ [303,304]:

Գրեթե բոլոր համաճարակաբանական հաղորդագրություններում անտեսվում է ՍՊՔ և ՈԿՍՔ միջև ավանդական տարբերակումը, ինչպես նաև կերակրափող-ստամոքսային անցման գոտում կամ դրանից պրոքսիմալ ծագող ադենոկարցինոմայի տարբերակումը կարդիալ հատվածի լորձաթաղանթից ծագող ուռուցքից: Հետևաբար, այդ հետազոտությունները չեն անդրադառնում տարբերությանը՝ Բարետի քաղցկեղի, իսկական անցման գոտու ստամոքսի քաղցկեղի և ՍՊՔ միջև: Այսպիսի տարբերակումը կատարվել է միայն թվով շատ փոքր հետազոտություններում: Այն աշխատանքներում, որտեղ նշվել է ՍՊՔ իրական ծագման աղբյուրը, *H. Pylori* հաճախությունը եղել է նույնը, ինչ ՈԿՍՔ դեպքերում [305-307]: Հետևաբար, *H. Pylori*-ն բոլոր տեղակայումների ստամոքսի ադենոկարցինոմայի հիմնական ռիսկի գործոնն է:

Խորհուրդ 3

***H. Pylori* էռադիկացիան նվազեցնում է ստամոքսի քաղցկեղի զարգացման ռիսկը:**

Ապացուցողական աստիճան՝ ցածր. Խորհրդի մակարդակը՝ միջին

Չնայած, որ կոհորտային հետազոտություններով հաստատապես ապացուցել են, որ *H. Pylori* –ն հանդիսանում է ստամոքսի քաղցկեղի կարևորագույն ռիսկի գործոն, ապացույցները, որ *H. Pylori* –ի էռադիկացիայից հետո ռիսկը նվազում է, հիմնված են դեռևս երկու ռանդոմիզացված հետազոտությունների վրա [301,308]: Ամենավերջին մեթա-վերլուծության տվյալները ցույց են տալիս, որ հիվանդացածության հարաբերությունը =0.53 (CI 0.44-0.64): Էռադիկացիան հավաստի բարենպաստ ազդեցություն է ունենում անախտանշանային վարակվածների և վաղ ստամոքսային քաղցկեղի էնդոսկոպիկ ռեզեկցիայի ենթարկված պացիենտների մոտ [309]: Ստամոքսի քաղցկեղի ռիսկի ամբողջական նվազումը կարող է գնահատվել 34%: Մի քանի հետազոտություններ են ներկայումս կատարվում Չինաստանում, Մեծ Բրիտանիայում և Կորեայում, այդ թվում մեկը՝ 184786 մասնակիցներ ներառող, որոնցով կստացվեն ստամոքսի քաղցկեղի կանխարգելման նպատակով *H. Pylori*

էռադիկացիայի առավելությունների և հնարավոր կողմնակի ազդեցությունների վերաբերյալ ավելի վստահելի տվյալներ [310,311]:

Խորհուրդ 4

Շրջակա միջավայրի պայմանների ազդեցությունը ստորադաս է H. Pylori –ի ինֆեկցիայի արդյունքի նկատմամբ:

Ապացուցողական աստիճան՝ 2a. Խորհրդի մակարդակը՝ A

Չնայած, Քաղցկեղի Հետազոտման Միջազգային Գործակալության մենագրությունները H. Pylori-ն դասակարգում են որպես ՈԿՍՔ առաջացնող առաջին կարգի քաղցկեղածին [312], տարբեր հեղինակներ համարել են, որ H. Pylori-ն հանդիսանում է անհրաժեշտ, բայց ոչ բավարար պատճառ [313]: Դեպք-ստուգիչ հետազոտությունները, որոնք իրականացվել են՝ հաշվի առնելով այն դիտարկումները, որ մանրէն կամ դրա մարկերները ստամոքսից կարող են վերանալ ծանր ատրոֆիայի դեպքում, հաստատել են H. Pylori –ի ներկա կամ նախորդող առկայությունը՝ գրեթե բոլոր ՈԿՍՔ դեպքերում: Կոհորտային հետազոտությունները ևս փաստել են H. Pylori-ով վարակվածությունը դեպքերի ճնշող մեծամասնությունում: Ճապոնական կոհորտ հետազոտությունը ցույց է տվել, որ քաղցկեղի բոլոր դեպքերը զարգացել են H. Pylori-դրական պացիենտների մոտ, և ոչ մի դեպք՝ H. Pylori-բացասականի [314]: Վերջերս Eurogast-EPIC կոհորտ հետազոտության կրկնակի վերլուծություն է կատարվել: Հետազոտությունը 10 եվրոպական երկրների 40-65 տարեկան 500000 սուբյեկտների շարունակական հսկողություն է իրականացրել: Մինչ փստորոշման պահը, H. Pylori վարակի հետ շփվելու փաստը ստուգվել է Վեստերն բլոտ եղանակով: Պարզվել է, որ քաղցկեղի դեպքերի 93.2%-ը դրական է, մինչդեռ ստուգիչ խմբում 58.9%-ն է դրական [315]: Այնպիսի գործոններ, ինչպիսիք են կերակրի աղի մեծ քանակությամբ օգտագործելը, ծխելը, ունենին H. Pylori ազդեցությունը միայն մի փոքր բարձրացնող արդյունք: Եվրոպայում և Ավստրալիայում կատարված երեք կոհորտ հետազոտությունների վերլուծությունը

ցույց է տվել, որ ստամոքսի քաղցկեղի առաջացման մեջ *H. Pylori*-ին վերագրվող ռիսկի բաղադրամասը 89%-է [316]:

Ակնհայտ է, թե արդյոք մնացած փոքր քանակով դեպքերը, երբ *H. Pylori*-ն հնարավոր չի եղել հայտնաբերել, նույնականացված են այլ էթիոլոգիական գործոնների հետ /օրինակ, էպշտեյն Բարի վիրուս/, թե պայմանավորված են սխալ դասակարգումով: Ավելին՝ անհայտ է, արդյոք բոլոր դեպքերում են կոֆակտորներն անհրաժեշտ, թե արդյոք ինֆեկցիան ինքնուրույն կարող է հանգեցնել ստամոքսի քաղցկեղի:

Խորհուրդ 5

***H. Pylori* էռադիկացին վերացնում է բորբոքային պատասխանը և վաղ բուժումը կանխարգելում է նախաքաղցկեղային վնասումների զարգացումը:**

Ապացուցողական աստիճան՝ 1b. Խորհրդի մակարդակը՝ B

H. Pylori էռադիկացիայից հետո ստամոքսի լորձաթաղանթի ակտիվ բորբոքումը արագորեն նվազում է: Դրանում կարելի է համոզվել *H. Pylori*-ի արդյունավետ էռադիկացիային հաջորդող անտրումի և մարմնի մորֆոլոգիական լավացմամբ [317] կամ կենսամարկերային տվյալների, մասնավորապես ՊԳՈ-ի /ակտիվ բորբոքման ինդիկատոր/ մակարդակի արագ նվազմամբ: ՊԳՈ-ի նվազումը նկատվել է *H. Pylori* էռադիկացիայից հետո 1-2 ամսվա ընթացքում [318,319]: Լորձաթաղանթի վիճակի լավացումը ցույց է տրվել նաև բարձր վերլուծական ունակությամբ էնդոսկոպիայով՝ էռադիկացիայից 3 ամիս հետո [320]:

Համաճարակաբանական ապացույցները ցույց են տվել, որ *H. Pylori* էռադիկացիան կանխարգելում է նախաքաղցկեղային վնասումների առաջացումը. օրինակ, Թայվանում դա հանգեցրել է ատրոֆիայի /բայց ոչ աղիքային մետապլազիայի/ 77.2% նվազման [321]: Դիտարկումը, որ *H. Pylori* -ի էռադիկացիան կանխարգելում է նախաքաղցկեղային վնասումների զարգացումը, հիմնվում են նաև վերջին մեթա-վերլուծության արդյունքների վրա, որոնք

վերաբերվում են ստամոքսի նեոպլազմայի էնդոսկոպիկ ռեզեկցիայից հետո H. Pylori -ի էռադիկացիայի շնորհիվ մետաքրոնիկական ստամոքսային վնասումների կանխարգելմանը [322]:

Խորհուրդ 6

H. Pylori –ի էռադիկացիան հետ է զարգացնում ստամոքսային ատրոֆիան, եթե դեռ առկա չէ աղիքայի մետապլազիա և կանխարգելում է նախաքաղցկեղային վնասումների զարգացումը:

Ապացուցողական աստիճան՝ 1b. Խորհրդի մակարդակը՝ A

H. Pylori –ի էռադիկացիան բուժում է քրոնիկական ակտիվ գաստրիտը: Դա կարող է նույնականացված լինել մասնագիտացված բջիջներով գեղձերի որոշակի վերականգնման, և այդպիսով, ատրոֆիկ գաստրիտի նվազման հետ [52,323,324]:

Բազմաթիվ մեթա-վերլուծություններ ցույց են տվել, որ ստամոքսային ատրոֆիան կարող է հետ զարգանալ և մարմնում, և անտրումում: Դա չի վերաբերվում այն դեպքերին, երբ առկա է աղիքային մետապլազիա: Վերջինս հնարավոր չէ հետ զարգացնել, չնայած նրա պրոգրեսիան կանգնեցվել է հիվանդների մի մեծ ենթախմբի մոտ:

Խորհուրդ 7

Ստամոքսի քաղցկեղի զարգացման ռիսկն ավելի արդյունավետ կարելի է նվազեցնել, եթե էռադիկացիոն թերապիան սկսել ատրոֆայի և աղիքային մետապլազիայի առաջացումից առաջ:

Ապացուցողական աստիճան՝ 2b. Խորհրդի մակարդակը՝ B

Դեռևս հայտնի չեն, թե նախաքաղցկեղային վնասումների որ աստիճանների և արտահայտվածության դեպքում H. Pylori -ի էռադիկացիան կարող է դեռևս հաջող կերպով կանխարգելել ստամոքսի քաղցկեղի զարգացումը:

Գրականության, ռանդոմիզացված հետազոտությունների, պոպուլյացիայի H. Pylori-ի սքրինինգի և բուժման համակարգային վերլուծությունը ցույց է տվել, որ էռադիկացիոն թերապիան նվազեցնում է ստամոքսի քաղցկեղի զարգացման ռիսկը [327]: Այդ վերլուծությունում երկու ռանդոմիզացված հետազոտություններ գնահատել են հիմքում նախաքաղցկեղային վնասումներով կամ առանց դրանց մասնակիցների մոտ քաղցկեղի առաջացումը [301,308]: Ոչ հավաստի միտում կար ենթադրելու, որ H. Pylori –ի էռադիկացիայի արդյունավետությունն ավելի մեծ էր առանց նախաքաղցկեղային վնասումների խմբում: Այս հնարավոր տարբերությունը նկատվել է մեկ հետազոտությունում [308], մինչդեռ մյուսում ոչ մի միտում չի նկատվել [301]:

Խորհուրդ 8

Ստամոքսի քաղցկեղի կանխարգելման համար H. Pylori –ի էռադիկացիան արժեքի համեմատ արդյունավետ է ստամոքսի քաղցկեղի բարձր ռիսկի պոպուլյացիայում:

Ապացուցողական աստիճան՝ միջին. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

Խնայողությունը հաշվի առնելու վրա հիմնված 9 հետազոտություններ գնահատել են ստամոքսի քաղցկեղի կանխարգելման համար H. Pylori –ի սքրինինգ և բուժում մոտեցման արժեք-արդյունավետությունը: Կիրառվել են տարբեր ենթադրություններ և մեթոդներ, բայց եզրակացվել է, որ սքրինինգը և բուժումն արժեք-արդյունավետ է: Գլխավոր ենթադրությունն այն է, որ H. Pylori-ի էռադիկացիան նվազեցնում է ստամոքսի քաղցկեղի ռիսկը և դա ներկայումս հաստատված է համակարգային վերլուծության տվյալներով [327]: Հավանական է, որ այս բարենպաստ արդյունքն առավել բարձր է ստամոքսի քաղցկեղի բարձր ռիսկի պոպուլյացիաներում /որտեղ իրականացվել են բոլոր այս ռանդոմիզացված հետազոտությունները/: Սակայն դա կարող է լինել արժեք- արդյունավետ նաև զարգացած երկրներում, քանի որ ռանդոմիզացված հետազոտությունները ցույց են տվել, որ պոպուլյացիայի H. Pylori-ի սքրինինգը և բուժումը նվազեցնում է դիսպեպսիայի հետ կապված ծախսերը [327,328]:

Խորհուրդ 9

Բացի ստամոքսի քաղցկեղի կանխարգելումից, H. Pylori-ի էռադիկացիան տալիս է նաև այլ կլինիկական և տնտեսական առավելություններ և պետք է ենթադրաբար կիրառել բոլոր պոպուլյացիաներում:

Ապացուցողական աստիճան՝ ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Ստամոքսի քաղցկեղի բարձր տարածվածության երկրներում և առանձնահատուկ խմբերում քաղցկեղի կանխարգելման նպատակով H. Pylori էռադիկացիայի առավելությունների վերաբերյալ կան շատ տվյալներ, բայց կան նաև հաղորդագրություններ ցածր տարածվածության շրջանների վերաբերյալ ևս: [329]:

H. Pylori –ի էռադիկացիայի կլինիկական և տնտեսական առավելությունները վերաբերում են նաև պեպտիկ խոցի կանխարգելմանը [18,47,330]: H. Pylori-ի էռադիկացիան նվազեցնում է նաև պեպտիկ խոցի արյունահոսության կրկնությունը, ՈՍՀԲՊ ինդուկցված խոցերի և անբացատրելի դիսպեպտիկ ախտանիշների առաջացումը: Տնտեսական տեսանկյունից ստուգիր և բուժիր ռազմավարությունը կարող է լինել արժեք-արդյունավետ առաջիկա 10 տարիներին:

Խորհուրդ 10

Ստամոքսի քաղցկեղի բարձր տարածվածության շրջաններում առաջարկված է կիրառել H. Pylori –ի սքրինինգ և բուժում ռազմավարությունը:

Ապացուցողական աստիճան՝ միջին. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

Առայժմ նման ռազմավարություն կիրառվել է քիչ երկրներում՝ Չինաստանում և Թայվանում [301,321]: Սքրինինգ և բուժում ռազմավարությունը խորհուրդ է տրվում կիրառել քաղցկեղի բարձր տարածվածության պոպուլյացիաներում, և այն համարվում է արժեք- արդյունավետ՝ կողմնակի

երևույթների և կոմպլայենսի կանխատեսվող մակարդակի առումով [331]: Չինաստանում, որպես ստամոքսի քաղցկեղի բարձր ռիսկի շրջան, լայն պոպուլյացիայում կատարված սքրինինգ և բուժում հետազոտությամբ արձանագրվել է գերազանց կոմպլայենս, նվազագույն կողմնակի ազդեցություններ և նվազագույն արժեք, որոնք միասին վկայում են լավ կիրառելիության մասին: Վերջնական պատասխան կտրվի՝ քաղցկեղի կանխարգելմանը երկարատև հետևող աշխատանքներ իրականացնելուց հետո [310]:

Խորհուրդ 11

H. Pylori գաստրիտի սքրինինգ և բուժում ռազմավարությունը պետք է դիտարկել ստամոքսի քաղցկեղի միջինից մինչև ցածր ռիսկի պոպուլյացիաներում:

Ապացուցողական աստիճան՝ ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Մասսորիխտ IV ուղեցույցները նշում են, որ սքրինինգ և բուժում ռազմավարությունը պետք է կիրառել ստամոքսի քաղցկեղի նշանակալի բեռով պոպուլյացիաներում [3], քանի որ բազմաթիվ ռանդոմիզացված կլինիկական հետազոտություններ ցույց են տվել, որ H. Pylori հաջողությամբ էռադիկացված պացիենտների մոտ ստամոքսի քաղցկեղի ռիսկը նվազում է 30-40%-ով [327]: Սակայն հիվանդության բեռը կարևոր է նաև ռիսկի ավելի ցածր գոտիներում: 2012թ. ԱՄՆ-ում արձանագրվել է ստամոքսի քաղցկեղից մահվան 12000 դեպք և 58000 մահվան դեպք՝ Եվրոպական Միության 28 երկրներում: Ստամոքսի քաղցկեղից մահացությունը շարունակում է բարձր մնալ, քանի որ դեպքերի մեծ մասում ախտորոշման պահին հիվանդությունը լինում է անբուժելի: Այսպիսով, կանխարգելումն ամենաընդունելի մեթոդն է ապագայի համար [332]: Այդպիսի միջին կամ հարաբերական ցածր ռիսկի գոտիների համար մեկ այլ մոտեցում է այն, որ այդտեղ կարող են լինել շրջաններ, պոպուլյացիաներ կամ նույնիսկ խմբեր, որտեղ հանդիպելիությունը բարձր է /օրինակ, բարձր տարածման շրջաններից ներգաղթյալներ/:

Հրատարակված հաղորդագրություններում *H. pylori* սքրինինգ և բուժում ռազմավարությունը համարվում է արժեք-արդյունավետ, անգամ այն պայմաններում, երբ մոդելների մեծ մասը մշակվել է զարգացած երկրների համար /օրինակ, ԱՄՆ, ՄԹ/: *H. Pylori*-ի էռադիկացիայի տնտեսական առավելությունը ավելի մեծ է, եթե հաշվի է առնվում նաև պեպտիկ խոցի և դիսպեպսիայի նվազումը: Սակայն պետք է նկատի ունենալ էռադիկացիայի պոտենցիալ անցանկալի հետևանքները՝ ներառյալ հակաբիոտիկների ռեզիստենտությունը/կողմնակի ազդեցությունները:

2013թ. IARC աշխատանքային խմբի կողմից որոշվեց, որ պետությունները պետք է հնարավորություն գտնեն իրականացնել սքրինինգ և բուժում ծրագրեր՝ հաշվի առնելով հիվանդության ծանրաբեռնվածությունը և այլ առողջապահական առաջնահերթությունները, ինչպիսիք են արժեք-արդյունավետության վերլուծությունը և հնարավոր կողմնակի հետևանքները [332]: Պետք է ընդգրկվի նաև ծրագրի ընթացքի և կիրառելիության գիտականորեն վավեր գնահատումը:

Խորհուրդ 12

H. Pylori –ի սքրինինգ և բուժում ռազմավարությունը խորհուրդ է տրվում կիրառել ստամոքսի քաղցկեղի բարձր ռիսկով անհատների նկատմամբ:

Ապացուցողական աստիճան՝ միջին. Խորհրդի մակարդակը՝ ուժեղ

“Ստամոքսի քաղցկեղի ֆենոտիպով” անհատներն ունեն քաղցկեղի բարձր ռիսկ: Այն բնորոշվում է մարմնի գերակշիռ գաստրիտով, ստամոքսային ատրոֆիա/ աղիքային մետապլազիայով, թերթթվությամբ և ներկայում կամ նախկինում *H. Pylori* առկայությամբ: Պոպուլյացիոն լայնածավալ սքրինինգը ինվազիվ մոտեցումների կիրառմամբ իրատեսական չէ, սակայն ստամոքսի քաղցկեղի ֆենոտիպը կարելի է որոշել ոչ ինվազիվ մարկերների կիրառմամբ, որոնք ներառում են *H. Pylori* շճաբանական որոշումը և պեպսինոգենի մակարդակը /ՊԳI կամ ՊԳI/II հարաբերությունը/ [333,334]:

Խոստումնալից է նաև գենոմիկ մոտեցումը, բայց այն պահանջում է վավերացում՝ պրոսպեկտիվ հետազոտություններով [335]: Որոշ տեղացի բնակչության ենթախմբեր և բարձր տարածվածությամբ երկրներից ներգաղթյալներ ևս կարող են ունենալ քաղցկեղի բարձր ռիսկ և պետք է թիրախ լինեն սքրինինգի և կանխարգելման համար [336,337]: Ընտանեկան անամնեզով անհատներն ունեն փոքր-ինչ բարձրացած ռիսկ և *H. Pylori* առկայության դեպքում ունեն նախաքաղցկեղային վիճակների՝ ներառյալ ատրոֆիան և թերթթվայնությունը, զարգացման բարձր հաճախություն [338,339]: Նրանք ևս պետք է սքրինինգի ենթարկվեն և բուժվեն:

Խորհուրդ 13

Ստամոքսի քաղցկեղի բարձր ռիսկի անհատների մոտ և պոպուլյացիաներում էնդոսկոպիայի վրա հիմնված սքրինինգը պետք է դիտարկել որպես հնարավոր մոտեցում:

Ապացուցողական աստիճան՝ շափ ցածր. Խորհրդի մակարդակը՝ թույլ

Որոշ երկրներում և պոպուլյացիաներում ստամոքսի քաղցկեղի ռիսկը բարձր է և այնտեղ սքրինինգի նպատակով էնդոսկոպիան վավեր մեթոդ է հանդիսանում [18,340,341]: Այդպիսի շրջաններում ստամոքսի քաղցկեղի առաջացման բարձր ռիսկ ունեցող անհատները կարող են հայտնաբերվել շճաբանական սքրինինգով, որից հետո պետք է առաջարկել էնդոսկոպիկ սքրինինգ և հետագա հսկողություն [342,343]:

Խորհուրդ 14

Առաջընթաց նախաքաղցկեղային վնասումները /ատրոֆիա/աղիքային մետապլազիա/ պահանջում են էնդոսկոպիկ փուլավորում և շարունակական հսկողություն:

Ապացուցողական աստիճան՝ շափ ցածր. Խորհրդի մակարդակը՝ միջին

Այս խորհուրդն առաջին անգամ տպագրվել է ուղեցույցում այն փաստերի վրա հիմնված, որ պրոգրեսիայի ռիսկը առավելագույնն է նախաքաղցկեղային վնասումների առկայության դեպքում [149,344-348]: Շարունակական հսկողության համար պացիենտների ընտրությունը պետք է հիմնված լինի հյուսվածաբանական դասակարգման չափանիշների վրա: /OLGA/OLGIM/ [344,346]:

Խորհուրդ 15

Ստամոքսի քաղցկեղի կանխարգելման համար հանրային իրազեկման քարոզարշավը պետք է խրախուսվի:

Ապացուցողական աստիճան՝ D. Խորհրդի մակարդակը՝ A

Մի խումբ երկրներում հանրային իրազեկման քարոզարշավներն ուղղվել են կոլոռեկտալ քաղցկեղի կանխարգելմանը և հանգեցրել են ազգային սքրինինգային ծրագրերի առաջարկմանը, որոնք հիմնված են կոլոնոսկոպիայի և/կամ կղանքում արյան առկայության վրա: Դրանք թիրախավորում են բարձր տարիքային ռիսկի /50-65 կամ 70 տարեկան/ անհատներին:

Ստամոքսի քաղցկեղի ռիսկի գործոնների մասին հանրային իրազեկումը և հիվանդության սքրինինգը բարձր ռիսկի շրջաններում պետք է խրախուսվի, սակայն հանրային իրազեկման քարոզարշավները կարող են հանգեցնել գերհետազոտման:

Խորհուրդ 16

Սքրինինգ և բուժում ռազմավարությունն ընդունված հակաբիոտիկներով, զանգվածային էռադիկացիայի դեպքում կարող է առաջացնել H. Pylori-ից տարբեր ախտածինների հավելյալ ռեզիստենտություն:

Ապացուցողական աստիճան՝ 1B. Խորհրդի մակարդակը՝ A

Ստամոքսի քաղցկեղի կանխարգելման նպատակով այնպիսի հակաբիոտիկների լայնորեն կիրառումը, որոնք հաճախակի կիրառվում են նաև այլ հիվանդությունների բուժման նպատակով /օրինակ, ամոքսիցիլին, կլարիտրոմիցին, լևոֆլոքսացին/, կարող են առաջացնել *H. Pylori*-ից տարբեր մանրէների ռեզիստենտություն [349,350]:

Առողջ կամավորների մոտ պլացերո-վերահսկվող հետազոտությունում *H. Pylori* -ի ամենակարճատև էռադիկացիայի ռեժիմով մեկ մակրոլիդի կիրառման դեպքում /կլարիտրոմիցին 500մգ՝ օրը 2 անգամ, 7 օր տևողությամբ/ բարձրանում է մակրոլիդ-ռեզիստենտ ըմպանային *Streptococcus pneumoniae*-ի կայունությունը: Տարբերությունը հավաստի էր հետազոտության ամբողջ՝ 180-օրյա ընթացքում [289]:

Մակրոլիդների օգտագործումը նույնականացվել է *Streptococcus pyogenes*-ի և *Staphylococcus aureus*-ի բարձր ռեզիստենտության հետ, որոնք հանդիսանում են արտահիվանդանոցային վարակների հաճախակի պատճառներ:

Ֆտորքինոլոնների լայնածավալ օգտագործումը նույնականացված է ուրոսիտաժին *Escherichia coli*-ի և *ԸՍԲԼ* /ընդարձակ սպեկտրով բետա-լակտամազներ/ արտադրող բազմադեղորայքային ռեզիստենտ մամրէային շտամների շրջանառության նկատելի բարձրացման հետ: Նույնը կատարվում է ամոքսիցիլինի օգտագործման դեպքում, որն արդեն շատ երկրներում ունի ռեզիստենտության շատ բարձր աստիճան: Ֆտորքինոլոնների նկատմամբ ռեզիստենտ բարձր ախտածնությամբ *Clostridium difficile*-ի O27 ռիբոտիպի տարածումը կարող է հեշտանալ այդ դեղերի օգտագործման դեպքում:

Հանրային առողջության քարոզարշավների ժամանակ ենթադրվում է առաջարկել բուժման այլընտրանքային ռեժիմներ, նվազեցնելու համար այս անցանկալի էկոլոգիական կողմնակի ազդեցությունը: Բիսմոլթը, տետրացիկլինը, մետրոնիդազոլը կյանքին սպառնացող հիվանդությունների բուժման համար պակաս կարևոր հակամանրէային միջոցներ են և ավելի ընդունելի են հանրային առողջության տեսակետից: Ռիֆաբուտինի նկատմամբ ռեզիստենտությունը

կարող է զարգանալ բազմաթիվ ամիսներ երկարատև օգտագործումից հետո, հետևաբար՝ կարճատև օգտագործումը չի ենթադրում Mycobacterium tuberculosis-ի ռեզիստենտության բարձրացում:

Խորհուրդ 17

H. Pylori նկատմամբ արդյունավետ պատվաստումը կլինի այդ ինֆեկցիայի դեմ պայքարի լավագույն միջոցը:

Ապացուցողական աստիճան՝ 4. Խորհրդի մակարդակը՝ D

Վերջերս Չինաստանից հաղորդվել է արդյունավետ H. Pylori –ի դեմ պատվաստանյութի օգտագործմամբ հետազոտության մասին [351]: Դա խոստումնալից է ապագայի համար և պահանջում է ավելացնել ջանքերը՝ պատվաստանյութի հետագա մշակման համար:

H. Pylori և ստամոքսի միկրոբիոտա

Խորհուրդ 1

Ստամոքսի միկրոբիոտան, բացի H. Pylori-ից, ներառում է նաև այլ միկրոօրգանիզմներ:

Ապացուցողական աստիճան՝ 2c. Խորհրդի մակարդակը՝ B

Ստամոքսը, ատամոքսաղիքային ուղու այլ հատվածների նման, գաղութացված է սեփական միկրոֆլորայով, որոնցից H. Pylori-ն ամենալավ ճանաչվածն է, բայց, հաստատ, ոչ միակը: Մինչ այժմ կուլտուրայի անկախ, մոլեկուլային մոտեցմամբ /օրինակ, 16S rԴՆԹ հատվածավորող անալիզ/ միայն մի քանի հետազոտություններ են իրականացվել հետազոտելու համար ստամոքսի միկրոֆլորայի կազմը, որտեղ հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է

